

## ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ազգային բարոյական: Դա է անհրաժեշտ իհմքը ազգի հոգեւոր կառոյցի, եւ դրանում է կայանում ազգի իրական ոյժը: Կա՞յ այդ բարոյականը - կայ ազգը. պակասո՞ւմ է դա - նուազում է կարեւորութիւնը բնական գործուների - ցեղի, հայրենի հողի, ինչպէս եւ ազգութիւն ստեղծող այլ կարգի ստորոգեալների: Մեր վերաբերմունքը դէպի մեր կենսաբանական արարիչ ցեղը՝ սրանում փնտուքը ազգային բարոյականի արմատը: Ցեղն է ազգի գերագոյն օրէնսգիրը բարոյական բնագաւառում: Ազգային բարոյականը ենթադրում է մի օրինակարգ եւ հանրապարտադիր ընթացք, որից ամէն շեղում համարւում է հոգեւոր մահափորձ ազգի դէմ: Իսկ ընթացքը - ըստ վաղեմագոյն մի իմաստասէրի - դա այն է աշխարհի համար, ինչ որ է գետանցքը՝ գետի համար: Արդեօք, այսօր խախտուած չէ՝ գաղութահայու ազգային բարոյականը: Այդ հարցին պատասխանելու համար, պէտք է ճշդել, թէ իրենից ի՞նչ է ներկայացնում օրուայ հայն իրեւ միտք, զգացում եւ կամք: Աւելի պարզ՝ պէտք է ճշդել, թէ այսօր ինչպիսի՝ զգացումներ են տիրապետում նրա հոգում: Այդ իմաստով բարոյահասարակագիտական մի վերլուծում տրտմութեամբ պիտի համակէ ծեզ:

Ի՞նչ էինք երեկ: Այդ մասին թող խօսի ինքը՝ դարերի հայը. «Մի տնից չինք, բայց մի ձենով էինք»: Ցեղորեն բարոյական էր հայը. «Մէջք մէջքի տանք՝ սարեր շուր տանք»: Սոցիալապէս առողջ էր նա. «Դացն Աստծուց, ես էլ հետը, ով հասնի՝ թող ուտի»: Սոցիալապէս արդար էր. «Այն մարդը, որ Աստուած ունի՝ աղքատ չէ»: Իդեալիստ էր նա. «Դող ու մոխիր կե՛ր, տմարդէն հաց մի՛ մուրար»... Ցեղորեն հպարտ էր. «Դայը չողմնի՝ չի նստի». Ծուլութեան հացը չսիրող է. «Ոտքդ քարին զարնուի՝ խղճնտանքդ քննէ»: Բարոյապէս զգայուն էր. «Իր ծառը ծարաւ թողած ուրիշինը ջրողը ո՛չ յարութիւն ունի, ո՛չ էլ թողութիւն»: Ազգայնօրէն զգաստ էր. «Առիւծը կատուին խեղդել չեմ տայ»: Տղամարդ էր հայը:

Այս էինք երեկ - որակի ազգ:

Մէջբերածն՝ հայկական առածների այդ փոքրիկ ծաղկաբաղը - որի մէջ մեր ժողովուրդը դրած է դարերի իր բարոյա-ազգային փիլիսոփայութիւնը - կը բաւէ հաստատելու, որ ստրկութեան մէջ, օտար լուծերի տակ անգան մենք եղել ենք ազգային բարոյականով գօրաւոր ժողովուրդ: Եւ իենց դրանում չէ՝ գաղտնիքը, որ մենք կանք ու կը մնանք, իսկ մեզ

հասակակից շատ ազգերից մնացել է քարէ յիշատակ միայն: Ապա ուրեմն՝ եթէ մեր սերունդները մտածէին, ապրէին եւ գործէին օրուայ հայու նման՝ այսօր հայութիւնից արեւի տակ մնացած կը լինէր մի սեղմ տապանագիր միայն: Տեսանք, թէ ի՞նչ էինք երեկ, զգում ենք, թէ ինչ չենք այսօր, եւ գիտենք, թէ ինչ պիտի դառնանք վաղը՝ իբրեւ ազգ չկորչելու համար:

Ազգային բարոյականի տեսակետից՝ մի Գիւլբենկեան աւելի չարժէ, քան՝ Յայաստանի մի գեղջուկ, եւ մի զօրավար, մի ուսուցչապետ, քան՝ մի համեստ արհեստաւոր, էականը յաւիտենական հայկականութիւնն է, որ ազգութիւնը նույիրագործում է իր ամէն մի անդամի մէջ:

Ազգային բարոյականը - ամէն բանից առաջ - պայմանաւորւում է մի ժողովորի ստեղծագործ համերաշխութեանը: Դրսեցի թէ տեղացի, իմաստասէր թէ անգրագէտ, չեզոք թէ կուսակցական - հայ մարդիկ են սրանք, որոնց հանդէա տաճածդ պաղութիւնը կայէնութեան է համազօր: Ներազգային կեանքում սպանում է ո՛չ միայն սուրբ, թոյնը, այլեւ՝ անտարբերութիւնը: Ճակատագրի եղբայր է ամէն հայ: Աւելին՝ ամէն հայ՝ դա դո՛ւ ես - ահա՝ ազգային բարոյականի անխախտելի օրէնքը: Այդ օրէնքի դէմ մեղանչողը քանդում է իր ազգութեան հիմերը, դա թշնամին է իր ազգի: Որակի՝ ազգ էինք երեկ: Չաղէտուելու եւ չկորչելու համար՝ վերստին պիտի դառնանք այդպիսին՝ իրամայողաբար: Անվերջ որակաւորուելու, ազգ դառնալու պրոցեսի մէջ են բոլոր ժողովուրդները: Իբրեւ ոգու ժողովուրդ՝ մեզ համար աւելի հեշտ է որակաւորուել: Աշխատենք դառնալ «թամկարժէք քար», որպէսզի «ծանր կշռենք եւ շատ արժենք»: Դա՝ է պահանջում մեզանից ազգային բարոյականը, մասնաւորապէս մեր բնաշխարհից դուրս:

**Գ. ՆԺԴԵՀ**  
«Ուզմիկ», Սոֆիա, 1943թ.

**ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ.  
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԾ  
Գաղիկ Տեր-Հարությունյան**

Կարելի է ամրագրել, որ Հայաստան – Թուրքիա հարաբերությունները թեւակոխել են զարգացման հերթական փուլ, որում դիվանագիտական-տեղեկատվական նախաձեռնությունը պատկանում է հայկական կողմին, ում ձեռնարկած համալիր գործողությունները (Սահմանադրական դատարանի հայտնի որոշումը, որը հստակություն հաղորդեց ՀՀ – Թուրքիա արձանագրություններում տեղ գտած անորոշ ծեւակերպումներին, ՀՀ նախագահի ծրագրային ելույթը Լոնդոնում, ՀՀ նախկին նախագահի հայտնի հանդիպումները Թերիանում եւն) զգալիորեն փոխեցին Երեւան – Անկարա հարաբերությունների շուրջ ծեւավորված իրավիճակը:

Ակտիվացել են նաև գործընթացը «հովանավորող» արտաքին դերակատարները. նրանք ցուցադրում են, որ բացի «հորդորներից», տիրապետում են նաև ազդեցության այլ հնարավորությունների: ՈՌ դեկավարությունը վճռականորեն մերժեց ԼՂՀ իիմնախմնիրը եւ ՀՀ – Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների ապագան «մեկ փաթեթով» ներկայացնելու թուրքական փորձը: Առանձին թեմա է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում Ցեղասպանության խնդրի հնարավոր քննարկումը, ինչն ԱՄՆ-ը պարբերաբար որպես ճնշամիջոց է օգտագործում Թուրքիայի դեմ:

Բոլոր պարագաներում, կարելի է փաստել, որ այդ գործընթացների հետեւանքով Հայաստանի համար ստեղծվել է շահեկան քաղաքական իրադրություն, ինչն իր հերթին պետք է մտահոգի Թուրքիային:

**Գլոբալ տեղաշարժեր.** Թուրքիայի ներկայիս ակտիվությունը պայմանավորված է բազմաթեւք համակարգի ծեւավորման հետեւանքով ընթացող աշխարհաքաղաքական տեղաշարժերով: Այդ իրողությունը գործնականում արտահայտվում է «մեծ տարածաշրջանում» ամերիկյան ռազմական ներկայության նվազման հստակ միտումով: Ինչպես հայտնի է, Սիահյալ Նահանգները պատրաստվում է մոտ ապագայում սկսել իր զինուժը դուրս բերել Իրաքից եւ Աֆղանստանից, եւ դա ոչ թե ժամանակավոր բնույթի երեւույթ է, այլ այդ տերության ընդհանրական ռեսուրսների օբյեկտիվ նվազման արդյունք: Ակնհայտ է նաև, որ նման գործընթացը

հանգեցնելու է ապակայունացման, եւ դա վերաբերում է ոչ միայն իրաքին կամ Աֆղանստանին: Յութեսական հեռանկարը պարտավորեցնում է տարածաշրջանի երկրներին «գոյատեւման» նոր ձեւեր փնտրել եւ ձգտել, իրենց պատկերացումներին համապատասխան, դիրքեր գրավել նոր իրավիճակում:

Միեւնույն ժամանակ, այդ ամենը բնավ չի նշանակում, թե այդպիսով Վաշինգտոնը կորցնում է դիրքերը տարածաշրջանում, իսկ ԱՄՆ-Թուրքիա երկարամյա գործընկերությունը մոտենում է ավարտին: Եվ այստեղ խոսքը միայն նրա մասին չէ, որ ԱՄՆ-ը, տիրապետելով գլոբալ մասշտաբով գործողություններ վարելու եզակի հնարավորությունների, բազմաբեւեռ համակարգում նույնպես պահպանում է առաջատարի կարգավիճակը: Ժամանակին ամերիկացիները բավական ջանքեր են գործադրել Թուրքիայի ներկայիս քաղաքական կերպարի ձեւավորման խնդրում, եւ նման չէ, որ նրանք հեշտությամբ «կիանձնեն» այդ երկիրը:

**Քաղաքական տեխնոլոգիաները եւ դրանց արդյունքները.** Անգլո-սաքսոնյան ռազմավարությունը նահանջի պարագայում իր շահերի պահպաննան հարուստ ավանդույթ ունի: Նման ռազմավարության արտահայտությունն է, օրինակ, «հատուկ նշանակության» քաղաքական ուժերի ձեւավորումը, որոնք հետագայում, արդեն «անկախ նավարկման» պայմաններում, իրագործում են նախապես ծրագրված քաղաքականություն:

Այդ տեսանկյունից հատկանշական է, որ «Բուշի դարաշրջանում» լրատվամիջոցներում կարելի էր հանդիպել վկայությունների, համաձայն որոնց՝ Թուրքիայի ներկայիս «չափավոր իսլամիստների» Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ) առաջացումը եւ առաջխաղացումը կապվում էր ամերիկյան «ներկոնների» հետ: Ավելի ուշ այս մոտեցումը համակարգված ձեւ ընդունեց RAND կորպորացիայի կողմից 2007թ. իրապարակված «Չափավոր իսլամիստական ցանցերի ձեւավորումը» հայեցակարգային աշխատությունում, որտեղ, մասնավորապես, տրվում են «չափավոր իսլամիստների» բնութագիրը եւ դրանց շահեկան տարբերությունը արմատականներից:

Անշուշտ, նման քաղաքական տեխնոլոգիաները բազմաթիվ ռիսկեր են պարունակում, քանի որ հասարակական-քաղաքական շարժումների էվոլյուցիան, այն էլ Արեւելքում, դժվար է կանխատեսել: Սակայն «չափավոր իսլամիստներին» խաղի մեջ մտցնելը իիմնավորված էր, քանի որ «ծայրահեղական իսլամի» դեմ երկու ճակատով (իրաք եւ Աֆղանստան) «հակաահաբեկչական պատերազմ» վարող ԱՄՆ-ի համար

չկար ավելի վատ սցենար, քան «արմատականացված» Թուրքիայի գոյացումը: Նման հնարավորությունն ակնառու դարձավ 1996թ. ընտրություններից հետո, երբ Թուրքիայում իշխանության եկավ արմատական իսլամիստների Բարօրություն կուսակցությունը, որի առաջնորդ Նեշմեղին էրաքանը կոչ էր անում «դուրս գալ ՆԱՏՕ-ից» եւ «հեռանալ ԱՄՆ-ից»: Ինչպես հայտնի է, քեմալականների ջանքերով այդ կուսակցությունն արգելվեց, երաքանը ենթարկվեց տնային կալանքի, եւ արդեն 2002-ին ԱԶԿ-ն հաղթեց ընտրություններում, իսկ «չափավոր իսլամական» Ուջեփի երդողանը դարձավ վարչապետ:

Նկատենք, որ «իսլամական ուղին» համահունչ է Թուրքիայի ընտրազանգվածի ներկա տրամադրություններին եւ նպաստում է թուրքական ինքնության ամրապնդմանը հանրությունում: Դա, մասնավորապես, հետեւում է 2007թ. անցկացված սոցիարօգման արդյունքներից, ըստ որի ԱԶԿ եւ ժողովրդական-Յանրապետական կուսակցության (ԺՅԿ) համակիրներն ինքնության հարցում կողմնորոշվել են այսպես.

Ինքնություն	ԱԶԿ համակիրներ, %	ԺՅԿ համակիրներ, %
Ես թուրք եմ	80,1	60,7
Ես մահմեդական եմ	88,3	38,0
Ես ժամանակակից եմ	18,1	42,2
Ես Արաբյուրդի հետեւորդ եմ	17,7	67,0
Ես քաղաքացի եմ	30,0	25,7
Ես դեմոկրատ եմ	13,5	28,5

Ինչպես տեսնում ենք, ԱԶԿ համակիրների մոտ, ի տարբերություն ԺՅԿ կողմնակիցների, բարձր է եւ թուրք լինելու, եւ թուրքը մահմեդական է գիտակցման մակարդակը:

«Իսլամական ուղին» հնարավորություն է տալիս Թուրքիային ավելի ակտիվ մասնակցել «իսլամական» գործընթացներին եւ անզամ հավակնել իսլամական աշխարհի առաջատարի կարգավիճակին: Բավական «խտացել» եւ հարձակողական է դարձել նաև այդ երկրի գաղափարախոսական դաշտը, որում այսօր գերիշխում են նեոսոմանիզմի, նեոպանթյուրքիզմի ու եվրասիականության (թուրքական մեկնաբանումով) ուղղությունները, որոնցում առկա են կայսրության հանդեպ կարոտախտն ու էքսպանսիոնիզմի արտահայտումները: Միեւնույն ժամանակ, նման հավակնությունները մտահոգում են նրա մրցակիցներին եւ գործընկերներին:

**«Բազմապլան խուսանավորմներ».** ԱՄՆ-ը, նպաստելով «արմատականներին» «չափավոր իսլամիստներով» փոխարինելու գործընթացին եւ շարունակելով մնալ Թուրքիայի ռազմաքաղաքական գործընկերը (բավական է նշել միայն Ինչիրլիքի ռազմական հենակետը, ուր, համաձայն մի շարք աղբյուրների, տեղակայված է նաեւ ամերիկյան միջուկային զենք), անհանգստացած է ներկայիս զարգացումներով, եւ դա վերաբերում է ոչ միայն հայտնի «քրդական խնդրին» եւ Սիրիա–Թուրքիա փոխհարաբերությունների բարելավմանը: Ինչպես հետեւում է RAND-ի այս տարվա՝ Թուրքիային նվիրված «Տագնապահարուց գործընկերություն» զեկույցից, ամերիկացիններին հատկապես մտահոգում են Իրան–Թուրքիա ամրապնդվող հարաբերությունները եւ վերջինիս հնարավոր «միջուկային» հավակնությունները: Թուրքիան, առանց միջուկային զենքի (երբ դրան տիրապետում են Պակիստանը եւ, ըստ երեւույթին, արդեն Իրանը) չի կարող հավակնել տարածաշրջանային եւ իսլամական առաջատարի դերին: Չի կարելի նաեւ բացառել այն տարբերակը, որ որոշ քաղաքական իրավիճակներում Իրանը կարող է միջուկային տեխնոլոգիաներ տրամադրել Թուրքիային: Անշուշտ, նման հեռանկարը խիստ մտահոգիչ է, եւ ոչ միայն ԱՄՆ-ի ու Իսրայելի համար: Համաձայն RAND-ի փորձագետների, իրանական գործոնը ամերիկացինները կարեւորում են նաեւ Երեւան–Անկարա հարաբերություններում. նրանք համարում են, որ դրանց կարգավորումը թույլ կտա «հեռացնել» ՀՀ-ն իսլամական հանրապետությունից:

Հատկանշական է, որ նման նկատառում առկա է նաեւ ՀՀ-ՈԴ համագործակցության առնչությամբ. համարվում է, որ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը (եւ այդ համատեքստում ԼՂՀ խնդրի կարգավորումը) կնվազեցնի Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմավարական դաշինքի ակտուալությունը, ինչը կմեծացնի ԱՄՆ եւ Թուրքիայի ազդեցությունը տարածաշրջանում: Թերեւս, այդ հանգամանքը, ինչպես նաեւ (գուցե առաջին հերթին) Հյուսիսային Կովկասի անջատողական շարժմաններում «թուրքական հետքի» հստակ առկայությունն է, որ թելադրում են Ռուսաստանին, չնայած Թուրքիայի հետ էներգետիկ-տնտեսական ոլորտում ունեցած ընդհանրական շահերին, ավելի զուսպ դիրքորոշում ընդունել հայ-թուրքական հարաբերություններում: Սակայն, իր հերթին, թուրքերի հետ հարաբերությունների զարգացումը Սոսկվան կարող է դիտարկել որպես հնարավորություն Թուրքիային ԱՄՆ-ից «հեռացնելու» ուղղությամբ:

Մեր շահերի տեսակետից՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Թուրքիայի հետ թույլ կտա Հայաստանին աղեկվատ լինել

տարածաշրջանային եւ գլոբալ «խաղաղասիրական» գործընթացներին ու լուծել սահմանի բացման հետ կապված տնտեսական-հաղորդակցային խնդիրները: Միաժամանակ, այս խնդրում պետք է կարեւորել այն, որ ՀՀ-ն ձգտում է Թուրքիայի հետ հարաբերությունները ծեւավորել առանց նախապայմանների: Դայտնի է, որ դարաբաղյան հակամարտությունում Ադրբեյջանին անթաքույց աջակցում է Թուրքիան, եւ դա թույլ է տալիս այդ երկիրը de-facto համարել այդ հակամարտության մասնակից: Այս համատեքստում՝ դիվանագիտական հարաբերությունների հնարավոր հաստատումը Թուրքիայի հետ կարելի է դիտարկել որպես կարեւոր նախադեպ, որի հիման վրա կարելի կլինի գտնել արժանապատիվ լուծումներ նաև ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման հարցում:

## ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՇՈՒՐՋ Ռուբեն Մելքոնյան

Իսլամացված հայության խնդրի ուսումնասիրության աշխուժացմանը զուգահեռ՝ հայաստանյան գիտական դիսկուրսում ծառացել է նաև հետեւյալ հարցը. հային բնորոշելու համար գերակայությունը պետք է տալ էթնի<sup>՝</sup>կ, թե՝ կրոնական պատկանելությանը: Մեզանում, շատ հաճախ, արմատացած է այն մտածելակերպը, թե հայ կարող է համարվել միայն քրիստոնյան, եւ ըստ այդմ՝ այլակրոն կամ կրոնափոխ հայ հասկացությունը բացառվում է: Մինչդեռ, իսլամացված հայերի եւ նրանց սերունդների գոյությունը փաստ է, եւ առնվազն անարդար կլինի անտեսել տարատեսակ դժվարությունների մեջ իրենց հայկական ծագման հիշողությունը պահպանած մարդկանց: Այս հարցում հավասարապես քննադատելի են չարդարացված ժխտողական եւ անտեղի լավատեսական գնահատականները: Մենք չպետք է առաջնորդվենք ցանկալիով, այլ այն պատկերով, որ այսօր մեզ պարտադրվել է, իսկ իրողությունն այն է, որ կա հայերի կամ ծագումով հայերի մի շերտ, որն արտաքնապես կամ իրականուն դավանում է իսլամ:

Մասնավորապես, ներհայաստանյան դիսկուրսում քննարկվում է տերմինի հարցը, այն է՝ արդյոք ճիշտ է «մուսուլման հայ» հասկացությունը: Դիմնական փաստարկն այն է, որ հայը պետք է լինի միայն առաքելական քրիստոնյա, իսկ ով այդպիսին չէ, ուրեմն հայ չէ կամ հայ է որոշ վերապահումներով: Դարկ ենք համարում շեշտել, որ թեեւ Դայ Առաքելական եկեղեցին մեր ազգի, ինքնության, պատմության մեջ կարեւորագույն եւ առանձնահատուկ դեր ունի, սակայն էթնիկ եւ կրոնական պատկանելությունները, այնուամենայնիվ, տարբեր են, եւ մենք հայ էինք նաև մինչեւ 301 թվականը: Մեծանուն Շաֆֆին, ով պատկանում է այս հարցում ավելի լայնախոհ մտածողների թվին, խոսելով կրոնական եւ դավանանքային միասնության մասին, նշում է. «Դավանությունների բազմատեսակությունը չի ոչնչացնում ազգային միությունը, միությունը պետք է որոնել այդ մասերի ներդաշնակության մեջ, որի հիմնական մորիկը պետք է լինի ազգայնությունն իր բարձր նշանակությամբ»:

Լինելով նաև իրատես՝ Շաֆֆին առաջարկում է գործել արդեն ստեղծված իրավիճակից բխող մարտավարությամբ, այլ ոչ թե ցանկալին տեսնելու երեւակայությամբ: «Շատ ցավալի է տեսմել Թուրքիայում կրոնի

պատճառով հայերի մի մասն անջատված ազգային ամբողջությունից: Բայց քանի որ դա արդեն պատմական կատարված իրողություն է, ուրեմն պետք է միավորելու հնարներ որոնել եւ ոչ թե բաժանող վիհն ավելի եւ ավելի լայնացնել: Կրկին թթված ազգասիրությամբ քարոզել այն մաշված թեման, թե մենք մի կրոնական ժողովուրդ ենք, թե մեր ազգությունը ճանաչվում է մեր եկեղեցիով, թե ով որ լուսավորչական չէ, հայ եւս համարվել չի կարող եւ այլն, այդ տեսակ քարոզներ գուցե մի ժամանակ հարկավոր լինեին, իսկ այժմ շատ եւ շատ հնացել են»:

Ազգային միասնության հիմք կարող է հանդիսանալ ոչ թե կրոնական, այլ ազգային պատկանելությունը, եւ այս մասին Ռաֆֆին ասում է. «Կարողիկությունը, բողոքականությունը եւ մինչեւ անգամ մահմեդականությունը չեն զրկում հային հայ լինելուց, եւ ոչ էլ լուսավորչականությունը մեզ իրավունք է տալիս հայ կոչվել»: «Մենք ազգի թշնամի ենք համարում այն կարծամիտ ազգասերներին, որ լուսավորչական եկեղեցուց դուրս հայ չեն ճամաչում»:

Դայտնի գրող Լեւոն Շանթը եւս, անդրադառնալով այս խնդրին, նշում է, որ կրոնը կարեւոր լինելով հանդերձ՝ չի կարող լինել այն կապը «որով ժողովուրդ մը կ'ուրոյնանայ ու կ'անջատուի միւսներէն», քանի որ պատահում է այնպես, որ միեւնույն ազգի տարբեր հատվածներ պատկանում են տարբեր եկեղեցիների: Ամփոփելով այս խնդրի շուրջ նտորումները՝ Շանթը գալիս է հետեւյալ եզրահանգման. «Ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդներէն զատողն ու առանձնացնողը իր ազգությունն է եւ ժողովուրդի մը մասերն ու անհատները իրարու կապողը՝ իր ազգային գործերը»:

Մեր կարծիքով, այս հարցում պետք է որդեգրել երկու մոտեցում՝ հեռահար եւ կարծաժամկետ: Մեր հեռահար նպատակն է խլամացված հայության հայադարձումը, որտեղ կարեւոր տեղ է զբաղեցնում առաքելական քրիստոնեությունը, իսկ ներկայումս նրանց հետ շփման համար պետք է ընտրել ավելի ճկուն մարտավարություն եւ նրանց ընդունել այնպես, ինչպես կան: Բացի այդ, իսլամի ընդունումը շատերի համար եղել է ժամանակավոր, եւ նպատակ է դրվել առաջին իսկ առիթի դեպքում վերադառնալ քրիստոնեությանը, ուղղակի հանգամանքները ոնանց թույլ են տվել, ոմանց՝ ոչ: Օրինակ՝ Երվանդ Օսյանը վերապրելով աքսորի տառապանքները եւ մի կերպ հասնելով արաբական վիլայեթներ, մասնավորապես Համայ, ստիպված է լինում տեղի տալ եւ արտաքուստ ընդունել իսլամ: Նա փոխում է նույնիսկ իր անունը՝ դառնալով Ազիզ Նուրի, սակայն ինչպես հենց ինքն է խոստովանում. «Ոչ ոք մեզ լրջօրէն իսլամ կը նկատէր»:

Չատ է խոսվում վտանգմերի մասին. օրինակ, որ իսլամացված հայերը կգան եւ Հայաստանում նզկիթներ կբացեն: Նախ՝ սահմանենք, որ մենք չենք ցանկանում այդ մարդկանց տեղափոխել Հայաստան, քանի որ մեծ մասամբ նրանք ապրում են իրենց պատմական հայրենիքում, եւ հենց իրենք էլ չեն ցանկանում լքել այն: Մեր գրույցների ժամանակ, երբ ասուն էինք, թե իրենք հավատարիմ չեն մնացել կրոնին, նրանք որպես հակա-փաստարկ նշում էին, թե մնացել են ամուր կառչած հողին: Այսինքն՝ մենք կարիք ունենք միմյանց հետ շփվելու, քանի որ բոլորիս էությունն ինչ-որ տեղ աղճատվել է մի դեպքում՝ հայրենիքի կորստի, մյուս դեպքում՝ կրոնի պատճառով: Ուսումնասիրելով կրոնափոխ հայերին՝ մենք նաեւ խնդիր ենք դնում վերականգնել մեր աղճատված ինքնությունը, չէ՞ որ նրանք մնացել են Հայրենիքի այն հատվածում, որը մեզ համար կորուսյալ է, նրանք են ծածուկ այցելել եւ այցելում մեր անարգված սրբավայրերը... Այս աղճատվածության գիտակցումը կա նաեւ կրոնափոխ հայերի շրջանում: Մասնավորապես, երբ Երեւանում շրջում էինք Թուրքիայի իսլամադավան համշենահայերից մեկի հետ եւ նա փողոցում պատահական անցորդի հետ խոսքի բռնվելով նշեց, որ ինքը Թուրքիայից է, այդ կինն ասաց. «Ավսո՞ւ, մեր հողերը մնացին այնտեղ», ինչին հետեւեց համշենցու պատասխանը. «Ոչի՞նչ, մայրիկ, մի՛ անհանգստացիր, մենք դեռ այնտեղ ենք, շուր տված ենք, բայց դեռ կանք»:

Կրոնափոխ հայերի խնդիրը կարեւոր է նաեւ հայության ամբողջական ռեսուրսների ճշգրտման առումով: Ինչպես գրում է արեւելագետ-պատմաբան Արա Պապյանը. «Առանց գերազնահատելու օտարախոս եւ այլադավան հայերի դերն ու նշանակությունը, անհրաժեշտ է ընդգծել նրանց կարեւորությունը հայոց պետականության շահերի առաջնորդության եւ, նպաստավոր պայմանների առկայության դեպքում, որոշակի ծրագրերում նրանց հնարավոր ընդգրկման հարցում: Յանկացած պետություն, անկախ հղորության չափից, կարիք ունի այլ պետություններում իր նկատմամբ բարեկամաբար տրամադրված կազմակերպված խմբերի առկայությամ: ՍՍՀՄ-ը դա անում էր կոմունիստական կուսակցություններ ստեղծելով, ամերիկացիք անում են զանգվածային մշակույթի տարածումով, մենք կարող ենք անել սփռված հայության միջոցով եւ հայության վերազարդողով»:

Այս տեսակետները, թե իսլամացված հայերը եւ նրանց սերունդները չեն ցանկանում պահել լեզուն, մշակույթը, էթնիկ նկարագիրը, մեղմ ասած, չեն համապատասխանում իրականությանը եւ ներքին անուսնությունների, արմատների որոննան ու այլ գործընթացներ հերքում են այդ տեսակետները, գոնե՛ մասնակի:

Կամ ասում եմ՝ նշեք մեկ օրինակ, երբ իսլամացված հայը մասնակցել է հայ ազատագրական պայքարին եւ անմիջապես բերում առարկություն չընդունող պատասխանը. «Այդպիսի օրինակներ դուք չեք գտնի»: Կամ էլ՝ «Ոչ մի դեպք չգիտենք, երբ մահմեդական հայը օրիասական պահին ազգային ինքնազիտակցության է եկել»: Խուսափելով անիմաստ բանավեճից՝ բավարարվենք մեկ-երկու օրինակով, երբ իսլամացված հայը գործուն մասնակցություն է ունեցել հայ ազատագրական պայքարին կամ հայությանը վերաբերող հարցերին: Մասնավորապես, ծնունդով Տարոնի Բուլանջիս գյուղից ուսուցիչ Ավետիսը եղել է 19-րդ դարի վերջերի հայ հեղափոխական պայքարի անդամներից, որի պատճառով էլ ձերբակալվել է եւ ենթարկվել անասելի կտտանքների: Չդիմանալով այս ամենին՝ Ավետիսը կրոնափոխ է լինում, ընդունում իսլամ, ավելին՝ դառնում ոստիկան եւ այդ ոլորտում գրադեցնում բարձր պաշտոն՝ դառնալով «բաշ կոմիսեր Մեհմեդ Էֆենդի» այսինքն՝ գլխավոր կոմիսար: Ոստիկան Մեհմեդ Էֆենդին արտաքուստ դառնում է հայերի խիստ հակառակորդը եւ իր բոլոր լժակներով պայքարում նրանց դեմ: Նրա թաքուն կյանքի կարեւոր դրվագներ է ներկայացնում Ռուբեն Տեր-Մինասյանը, որը հեղափոխական պայքարի տարբեր փուլերում համագործակցել է բաշ կոմիսեր Մեհմեդի հետ: Խոսելով ուրացած Ավետիսի մասին՝ Ռուբենը գրում է. «Ան մահմետական էր, բայց մնացած էր քրիստոնեայ. կինն ու որդիներն էլ նոյնպէս ներքուստ մոլեռանդ քրիստոնեաներ էին»: Մեհմեդ Էֆենդիի մասին «Դայրենիք» ամսագրում հոդվածով հանդես է եկել Ա.Աստվածատրյանը, որը նշում է, որ Մեհմեդ Էֆենդին ապրում էր մեծ ողբերգություն, քանի որ շարունակում էր շրջապատի համար լինել մոլեռանդ մուսուլման, իսկ գիշերները աղոթում տան մի անկյունում սարքած գաղտնի եկեղեցում. «Այդ դժբախտ ընտանիքի իսկական կեանքը գիշերն էր»: Ռուբեն Տեր-Մինասյանը, խոսելով Մեհմեդ Էֆենդիի հայանպաստ գործունեության եւ արտաքուստ հակահայ մուսուլմանի կերպարի հակասությունների մասին, գրում է. «Այս կեղծիքը, սակայն, ազնիւ էր, հարկադրանքի տակ եղած ծպտում էր: Մեհմեդ Էֆենդիի ոտիկանական շորերուն ներքեւ կ'ապրէր նոյն հին ազատասէր, հայրենասէր, յեղափոխական հայը»: Իր գործունեության պատճառով Մեհմեդ Էֆենդին երբեմն կասկածի տակ է ընկնում, սակայն շարունակում է նվիրումով ծառայել հայությանը՝ ընտրելով պայքարի այդպիսի մարտավարություն: Ավելի ուշ Մեհմեդ Էֆենդին տեղափոխվում է Ստամբուլ, եւ ամենահետաքրքիրն այն է, որ Զավեն պատրիարքի միջոցով մկրտում է իր զավակներին՝ վերադարձնում քրիստոնեության, իսկ ինքը մնում է իսլամ մինչեւ կյանքի վերջը:

Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալաքյանի գրքում եւս հանդիպում են իսլամացված հայերի հետ կապված որոշ փաստեր, եւ ուշագրավ է, որ հայ հոգեւորականը ներկայացնում է, թե ինչպես էին արտաքուստ կրոնափոխված հայերը ջանում օգնել աքսորյալ հայերին: Պալաքյանի հայտնի «Հայ գողգոթան» գրքի այն գլուխը, որը վերնագրված է «Իսլամացած կեսարացի հայ կիներու անձնվիրությունը», նկարագրում է, թե ինչպես բռնի կրոնափոխ հայ կանայք անհրաժեշտ սննդամթերք էին հասցնում աքսորյալների քարավաններին՝ այդպիսով վտանգելով նաեւ իրենց կյանքը:

Ցեղասպանության ժամանակ արձանագրվել են նաեւ դեպքեր, երբ մուսուլման համշենցիները փրկել են իրենց քրիստոնյա եղբայրներին: Յովակին Յովակինյանն իր «Պատմութիւն հայկական Պոնտոսի» աշխատության մեջ գրում է. «Մեծ Եղեռնի շրջանին լեռները ապաստանած Հայերում առաւելապես օգտակար եղան մահմետական Հայերը»:

Բռնի կրոնափոխ հայերի մասին Հայաստանում ինչող կատեգորիկ, ժխտողական հայտարարությունները մեծապես վնասում են իսլամացված հայերի վերազարթոնքին, եւ արդեն առաջին «արյունքները» կան: Մասնավորապես, Կրասնոդարի «Համշեն» կենտրոնի տնօրեն Տիգրան Թավայյանը, խոսելով Միջին Ասիայից Կրասնոդար գաղթած իսլամացված համշենահայերի եւ նրանց շրջանում վերազարթոնքի մասին, փոխանցում է. «Իսլամացված հայ չի լինում ասելով՝ մենք խանգարում ենք այն ահագին աշխատանքին, որ պետք է տարվի իսլամացված հայերի հետ»:

Ամփոփելով՝ ցանկանում ենք մեջբերում անել Հայ Ավետարանական եկեղեցու պաշտոնաթերթ «Բանբերում» 1969թ. տպագրված մի հոդվածից, որտեղ խոսվում է ուժացած հայության նկատմամբ մեր պարտավորությունների մասին: Յոդվածագիր Պագգայանը գործելու կոչնակ է հնչեցնում՝ ասելով. «Այսօր սակայն որ առիթ եւ կարելիութիւն ունինք անոնց օգնութեան հասնելու, եթէ այս վերջին ուկեղեն պատեհութիւնն ալ փախցնենք, անշուշտ օր մը Աստուած պիտի հարցնէ մեզի- քեզի եւ ինծի. «Ո՞ւր է քու եղբայրդ...»:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

### Վահրամ Չովյան

Լիբանանի հայ բողոքականներն այդ երկրի հայ համայնքի դավանաբային երեք շերտերց մեկն են՝ առաքելական եւ կաթոլիկ հայերի հետ միասին։ Դեռևս 19-րդ դարում Լիբանանում հաստատված հայ բողոքականների համայնքը ստվարացել է 1915թ. Յայոց ցեղասպանության արդյունքում, երբ Օսմանյան կայսրության այլ բնակավայրերից բազմաթիվ հայերի հետ միասին այս երկիր գաղթեցին նաեւ բողոքական հայերը։ Յայ բողոքականները ներկայումս կազմում են Լիբանանի հայ համայնքի մոտ 5%-ը՝ 4-5 հազ. մարդ։ Նրանք կենտրոնացած են իիմնականում Բեյրութում եւ Այնձարում։ Բեյրութն ինչ-որ առումով կարելի է համարել Մերձավոր Արեւելքի հայ բողոքականության կենտրոնը, քանի որ այստեղ է գտնվում Մերձավոր Արեւելքի Յայ Ավետարանական եկեղեցիների միությունը։

Քանի որ բողոքական հայերը մեծ թիվ են կազմում ընդհանուր լիբանանարնակ բողոքականների շրջանում, Լիբանանի խորհրդարանում բողոքական համայնքի համար նախատեսված միակ պատգամավորական տեղը կամ մանդատը ժամանակ առ ժամանակ զբաղեցնում է ազգությամբ հայ պատգամավոր։ Այդ կերպ Լիբանանի խորհրդարանում հայերին հատկացվող պատգամավորական մանդատների քանակը ժամանակ առ ժամանակ հասնում է 7-ի, քանի որ հայ առաքելականներն ու կաթոլիկները նույնպես հանդիսանում են առանձին համայնքներ, որոնց հատկացվում են պատգամավորական տեղեր՝ համապատասխանաբար 5 եւ 1 (ընդհանուր՝ 6) մանդատ համամասնությամբ։

Լիբանանահայ բողոքական համայնքի վիճակը ընդհանուր խոսքերով ներկայացնելու համար կարելի է առանձնացնել հետեւյալ հատկանիշները։

1. Բողոքական Յայությունը Լիբանանում բավական կազմակերպված, կենսունակ եւ ակտիվ համայնք է։ Այդ կենսունակության արտահայտությունն առաջին հերթին նրա կազմակերպչական կառույցների ակտիվ գործունեությունն է։

2. Լիբանանահայ բողոքականությունը կտրված չէ առաքելական եւ կաթոլիկ Յայությունից, այլ նրանց հետ միասին կազմում է օրգանական ամբողջություն։ Դրա վկայություններն են։

- ❖ բողոքական կառույցների՝ ընդհանուր համայնքային, ինչպես նաև համագգային նշանակություն ունեցող գործունեությունը,
- ❖ միջդավանական համագործակցությունն ինչպես առաքելական, այնպես էլ կաթոլիկ հայերի հետ բազմաթիվ համագգային ծրագրերի ու խնդիրների լուծման շուրջ:

### **Կազմակերպական կառույցները**

Ինչպես բողոքական Յայությանն ընդհանրապես, լիբանանահայ բողոքականությանը նույնպես բնորոշ է, բացի կրոնական կառույցներից, նաև կրթական, բարեգործական եւ այլ կառույցների առատությունը: Լիբանանահայ բողոքական կառույցները, ըստ գործունեության ուղղվածության, բաժնավում են 4 հիմնական խմբերի՝ հոգեւոր-եկեղեցական, սոցիալական, կրթական, տեղեկատվական:

**Հոգեւոր-եկեղեցական կառույցներ:** Լիբանանահայ համայնքում բողոքական եկեղեցիները հիմնադրվել են 1920-ականներից՝ տեղի հայ բողոքական համայնքի ստվարացմանը զուգընթաց: Առաջին բողոքական եկեղեցին՝ Բեյրութի Առաջին Յայ Ավետարանական եկեղեցին, հիմնադրվել է 1922թ.: Ներկայումս հայ ավետարանական եկեղեցիների թիվը Լիբանանում հասնում է 6-ի: Լիբանանահայ բողոքականության առաջնորդն է վերապատվելի Փոլ Յայտոսթյանը, որը Սերծավոր Արեւելքի Յայ Ավետարանական եկեղեցիների միության կենտրոնական կոմիտեի նախագահն է:

**Սոցիալական կառույցներ:** Սոցիալական հաստատություններ լիբանանահայ բողոքականների կողմից հիմնվել են կարիքի թելադրանքով՝ Յայոց ցեղասպանությունից փրկված եւ Լիբանանում ապաստանած Յայությանն օժանդակելու նպատակով: Դրանք ներկայումս ծավալում են բարեգործական, առողջապահական, կրթադաստիհարակչական եւ այլ գործունեություն: Լիբանանահայ բողոքականության նշանավոր սոցիալական կառույցներից են Յայ ավետարանական սոցիալական ծառայության կենտրոնը, Յայ ազգային առողջարանը, Լիբանանի եւ Սիրիայի Յայ Ավետարանական եկեղեցիների քրիստոնեական Զանից միությունը եւ այլն:

**Կրթական հաստատություններ:** Լիբանանի բողոքական հայերի կրթական հաստատությունների թվում ամենանշանավորը Բեյրութի Յայկազյան համալսարանն է, որը միակ բուհն է ողջ Սփյուռքում: Յայկազյան համալսարանը հիմնվել է 1955թ.: որպես վարժարան, որն աստիճանաբար զարգանալով՝ 1966թ. վերածվել է բուհի: Յայկազյան համալսարանի չորս ֆակուլտետներում, բացի կրոնագիտությունից,

ուսուցանվում են արվեստի եւ գիտության բազմաթիվ բնագավառներ: Համալսարանի նախագահը լիբանանահայ բողոքականության հոգեւոր առաջնորդ, Մերձավոր Արեւելքի Հայ Ավետարանական Եկեղեցիների միության կենտրոնական կոմիտեի նախագահ, Վերապատվելի Փոլ Հայտոսթյանն է:

Լիբանանի հայ բողոքական դպրոցները, որոնց թիվը հասնում է 7-ի, ունեն մեծ հեղինակություն ոչ միայն բողոքական հայերի, այլեւ ողջ լիբանանահայության շրջանում: Դրանք գտնվում են ինչպես Բեյրութում, այնպես էլ Լիբանանի այլ հայաշատ բնակավայրերում:

**Տեղեկատվական կառույցներ:** Լիբանանահայ բողոքականության տեղեկատվական կառույցները տպագիր հրատարակություններն են: Դրանք են՝ Բեյրութում լույս տեսնող «Պատաճեկան արձագանք», «Զանասեր» ամսագրերը եւ «Լուսյ» եռամսյա հանդեսը: Տպագիր հրատարակությունների թվում կարեւորությանք առանձնանում է Հայկացյան համալսարանի կողմից 1970-ից հրատարակվող Հայկացյան հայագիտական հանդես տարեգիրքը:

### **Համազգային նշանակության գործողությունները**

Լիբանանի հայ բողոքական կառույցների գործունեությունը հաճախ չի սահմանափակվում նեղ բողոքական համայնքի շրջանակներում, այլ ընդգրկում է ողջ լիբանանահայ համայնքը: Քենց այդ համազգային նշանակություն ունեցող գործողություններն էլ վկայում են Լիբանանի բողոքական Հայության՝ ընդհանուր հայ համայնքի օրգանական մասը լինելու մասին: Համազգային նշանակություն ունեցող գործողություններն ընդգրկում են հետեւյալ ոլորտները՝ կրթական, սոցիալական, տեղեկատվական:

Կրթական ոլորտում բողոքական կառույցների գործունեության համազգային բնույթը երեւում է երկու հանգամանքով.

**1. Սովորողների դավանանքային կազմը:** Լիբանանի հայ բողոքական կրթական կառույցներուն ուսանում են ոչ միայն հայ բողոքականները, այլ նաեւ առաքելականներն ու կաթոլիկները: Այս տեսակետից առանձնանում է առաջին հերթին Հայկացյան համալսարանը, որի գործունեությունը չի սահմանափակվում անգամ ողջ լիբանանահայ համայնքի շրջանակներում: Համալսարանն ամեն տարի ուսանողներ է ընդունում աշխարհի 20 երկրներից՝ անկախ դավանանքային պատկանելությունից: (Հայկացյան համալսարանի ուսանողության շուրջ կեսը այլազգիներ են, ինչը վկայում է նրա միջազգային նշանակության, ինչպես նաեւ բարձր հեղինակության մասին):

Ինչ Վերաբերում է դպրոցներին, լիբանանահայերի համար դպրոցների ընտրության հարցում տարբերություն չկա: Այդ է պատճառը, որ Լիբանանի հայկական դպրոցներում, այդ թվում նաև՝ բողոքական, սովորում են ինչպես լուսավորչական, այնպես էլ կաթոլիկ եւ ավետարանական ուղղության հետեւողների զավակներ:

**2. Կրթական ծրագրերը:** Յայ բողոքական կրթական հաստատությունները, բացի կրոնական գիտելիքներից, իրենց սաներին ուսուցանում են նաև գիտելիքներ ընդհանուր հայագիտությունից: Յայկազյան համալսարանի հայագիտության ամբիոնում ուսումնասիրվում եւ ուսուցանվում են հայ գրականությունը, պատմությունը, քաղաքականությունն ու մշակույթը: Յետեւարար, համալսարանի շրջանավարտները դառնում են ոչ միայն նեղ բողոքական համայնքի, այլ նաև ողջ լիբանանահայ համայնքի նաշտաբով գործիչներ:

Վերոհիշյալ երկու հանգամանքները, փոխկապակցված լինելով, ապահովում են Լիբանանի հայ բողոքական կրթական հաստատությունների գործունեության համագային բնույթը: Մասնավորապես, հայագիտական կրթական ծրագրերով է պայմանավորված այն, որ Լիբանանի հայ բողոքական կրթական հաստատություններում ուսանելու են գալիս հայեր՝ անկախ իրենց դավանանքային պատկանելությունից:

Այսպիսով, Լիբանանի հայ բողոքական կրթական հաստատությունները բողոքական են միայն այնքանով, որքանով պատկանում են Յայ Ավետարանական եկեղեցուն: Իսկ սովորողների կազմով, ինչպես նաև ուսուցանվող առարկաներով, դրանք չեն տարբերվում ընդհանուր հայկական ուսումնական հաստատություններից:

*Սոցիալական ոլորտի հայ բողոքական հաստատությունները ժամանակին ստեղծվել են ծանր վիճակում հայտնված լիբանանահայության կարիքները հոգալու համար: Ուստի, ակնհայտ է, որ դրանց գործունեությունն ի սկզբանե չէր կարող սահմանափակվել միայն բողոքականության շրջանում, այլ պետք է ընդգրկեր ողջ լիբանանահայությունը՝ անկախ դավանանքային պատկանելությունից: Այսպիսով, այդ սոցիալական կառույցները, ստեղծված լինելով լիբանանահայ բողոքականության՝ Յայ Ավետարանական եկեղեցու կողմից եւ պատկանելով Վերջինիս, ծառայում են ամբողջ լիբանանահայ համայնքին:*

*Տեղեկատվական ոլորտում բողոքական հայերի կողմից հրատարակվող պարբերականներում տեղ են գտնում ոչ միայն բողոքական համայնքին, այլև ամբողջ լիբանանահայությանը, ինչպես նաև համագ-*

գային խնդիրներին առնչվող հրապարակումներ: Յամազգային նշանակությամբ աչքի է ընկնում առաջին հերթին Յայկազյան հայագիտական հանդեսի գործառնությունը, որում շոշափվում են Յայագիտության տարրեր հիմնահարցեր:

### **Միջդավանական համագործակցությունը**

Չնայած դավանանքային տարրերակվածությանը, լիբանանահայության երեք դավանանքային շերտերում էլ առկա է ընդհանուր էթնիկ պատկանելության զգացում, որը խարսխված է ազգային ինքնագիտակցության վրա: Այդ համգամանքն էլ հայ առաքելական, կաթոլիկ եւ բողոքական համայնքներին միավորում է մեկ ընդհանուր օրգանական ամբողջության՝ Լիբանանի հայ համայնքի մեջ: Դրա արտահայտությունն ու խորհրդանշն է Յայ Առաքելական, Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիների համագործակցությունը զանազան համազգային ծրագրերի իրականացման ոլորտում:

Յայ Ավետարանական եկեղեցու համագործակցությունը մյուս դավանանքային խմբերի հետ նույնպես ընդգրկում է հասարակական կյանքի տարրեր ոլորտներ՝ սոցիալական, գիտակրթական, քաղաքական:

*Սոցիալական* ոլորտն առաջնային տեղ ունի Լիբանանի Յայության միջդավանական համագործակցության բնագավառում: Նման համագործակցության վառ օրինակ է 1923թ. Յայ Առաքելական եւ Ավետարանական եկեղեցիների կողմից Մաամլեյնում հայ ազգային բուժարանի հիմնումը, որը հետագայում՝ 1937թ. տեղափոխվեց Ազունիե: Ազգային հիվանդանոցի հիմնադրումը պայմանավորված էր Յայոց ցեղասպանության արդյունքում Լիբանան գաղթած Յայության շրջանում տարածված հիվանդությունները (թոքախտ) բուժելու անհրաժեշտությամբ: Բուժարանի հիմնադրման գործում մեծ ավանդ ունեցած հայ գործիչների թվում առանձնակի շեշտվում են Մեծի Տանն Կիլիկիո Սահակ Խապայան Վեհափառի եւ Վեր. Ենովք Յատիտյանի անունները: Ներկայումս ազգային հիվանդանոցը Յայ Առաքելական եւ Ավետարանական եկեղեցիների համատեղ սեփականությունն է եւ, լինելով Լիբանանի առաջատար բուժհաստատություններից մեկը, շարունակում է իր ազգանպաստ առաքելությունը: Յիվանդանոցը ղեկավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, որն ունի ութ անդամ՝ չորս առաքելական եւ չորս ավետարանական: Յամածայն կանոնադրության՝ հոգաբարձուների խորհրդի ատենապետի պաշտոնը մշտապես գբաղեցնում է Յայ Առաքելական եկեղեցու, իսկ փոխատենապետինը՝ Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչը: Միեւնույն ժամանակ, ատենապիրը միշտ

առաքելական է, իսկ զանձապահը՝ ավետարանական: Փաստորեն, սա այն դեպքն է, երբ միջդավանական համագործակցությունը կրում է ինստիտուցիոնալ բնույթ:

**Գիտակրթական** ոլորտում միջդավանական համագործակցությունը դրսեւորվում է.

❖ բողոքական կրթական հաստատություններում առաքելական-ների եւ կաթոլիկների ակտիվ գործունեությամբ,

❖ մեկ համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին մյուս-ների ակտիվ մասնակցությամբ:

Բողոքական կրթական հաստատություններում առաքելական եւ կաթոլիկ հայերի ակտիվ գործունեության տեսանկյունից կրկին ուշագրավ է Յայկազյան համալսարանի փորձը: Չնայած համալսարանը պատկանում է Յայ Ավետարանական եկեղեցուն, եւ նրա նախագահն էլ Լիբանանի հայ բողոքականների հոգեւոր առաջնորդն է, այնուամենայնիվ, կրթօջախի վարչական աշխատողների եւ դասախոսական կազմում մեծ թիվ են կազմում նաև Յայ Առաքելական եւ Կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները: Ինքը՝ Մեծի Տաճան Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը, Յայկազյան համալսարանում կանոնավոր կերպով հանդես է գալիս դասախոսություններով՝ նվիրված հայագիտական, աստվածաբանական եւ էկումենիզմի թեմաներին: Յամալսարանում դասավանդող Յայ Կաթոլիկ եկեղեցու նշանավոր դեմքերից է Ա.Կուանյանը, որը Յայկազյան հայագիտական հանդեսի գլխավոր խնբագիրն է:

Մեկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին մյուսների ակտիվ մասնակցության ուշագրավ օրինակ է Անթիլիասում Մեծի Տաճան Կիլիկիո կաթողիկոսության եւ Երեւանի Մատենադարանի համատեղ գիտաժողովը՝ «Կիլիկյան Յայաստանի մշակույթը» խորագրով, որին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին Լիբանանի Յայ Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիները: Սա եւս մեկ փաստ է, որը վկայում է կաթոլիկ եւ բողոքական հայերի՝ ընդհանուր հայկական քաղաքակրթական դաշտի մասը լինելու մասին:

Ուշագրավ է նաև 2005թ. Յայկազյան համալսարանի 50-ամյակին նվիրված տոնակատարությանը Յայ Առաքելական եւ Կաթոլիկ եկեղեցիների մասնակցությունը՝ ի դեմս Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերյանի եւ Յայ կաթողիկե պատրիարքության ընդհանուր փոխանորդ Վարդան Եպս. Աշգարյանի:

**Քաղաքական** ոլորտում միջդավանական համագործակցությունը դրսեւորվում է համագգային խնդիրների եւ մարտահրավերների դիմա-

գրավման ուղղությամբ համատեղ դիրքորոշումների, ինչպես նաև քայլերի ձեռնարկման մեջ: Լիբանանահայ համայնքը, անկախ իր ներքին շերտավորվածությունից, միասնական է այնպիսի համազգային նշանակություն ունեցող խնդիրներում, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության ճանաչումը, Հայ դատը, Արցախյան հականարտությունը, թուրքական նկրտումներին դիմակայելը եւ այլն:

Քաղաքական հարցերում Լիբանանի երեք հայկական կրոնական համայնքների միասնականության ակնառու դրսեւորում էր 2006թ. օգոստոսին Հայ Առաքելական, Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիների համատեղ հայտարարությունը՝ ընդդեմ Լիբանանում թուրքական խաղաղապահ ուժերի տեղակայման:

Այսպիսով, լիբանանահայ բողոքականները, կազմելով բավական ակտիվ եւ կենաւունակ համայնք, միաժամանակ սերտորեն ինտեգրված են Լիբանանում բնակվող մնացյալ Հայության հետ եւ միասին կազմում են մեկ միասնական օրգանական ամբողջություն՝ լիբանանահայ համայնքը:

## ԱԴՐԵԶԱՆԻ ՀԱԿԱՅԱՅ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

### Արաքս Փաշայան

Հայաստանի դեմ Ադրբեջանի քարոզությունը, որ ծեւավորվել է Ղարաբաղյան հակամարտության ընթացքում, դարձել է այդ երկրի ռազմավարության անկյունաքարերից մեկը: Ադրբեջանը Հայաստանի դեմ լայնածավալ քարոզչություն է իրականացնում նաև միջազգային իսլամական կառույցների միջոցով: Այդ համատեքստում Բաքուն լավագույնս օգտագործում է կրոնական գործոնը, իսկ ավելի ստույգ՝ իսլամական համերաշխության գաղափարը, որն առանցքային նշանակություն ունի, մասնավորապես, միջազգային իսլամական կրոնաքաղաքական բարձրագույն մարմնի՝ իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) գաղափարախոսական արժեհամակարգում:

Խորհրդային Միության փլուզումից եւ անկախության ծեռքբերումից հետո Ադրբեջանը 1992-ին, ոչ առանց Թուրքիայի աջակցության, ինտեգրվեց միջազգային այդ կառույցին, որին ներկայումս անդամակցում է 57 պետություն: Պատահական չէ, որ հայ-ադրբեջանական հակամարտության հարցն առաջին անգամ քննարկվեց 1992թ. հունիսի 14-ին Ստամբուլում կայացած իսլամական պետությունների արտգործնախարարների արտահերթ հանդիպմանը, որի ժամանակ Հայաստանին դատապարտող բանաձեւ ընդունվեց: Մասնավորապես՝ Թուրքիայի գործուն միջամտությամբ հայ-ադրբեջանական հակամարտության թեման 1992-ից՝ Ստամբուլի կոնֆերանսից ի վեր, ամրագրվեց իսլամական աշխարհի քաղաքական մարմնի օրակարգում:

ԻԿԿ գագաթողովներում եւ արտաքին գործերի նախարարների կոնֆերանսներում, որպես կանոն, ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ագրեսիան Ադրբեջանի Հանրապետության դեմ բանաձեւ»: 1992-ից ի վեր ԻԿԿ գրեթե բոլոր ծեւաչափի հանդիպումներում, այդ թվում՝ կանոնադրական մարմիններում, հանձնաժողովներում, կից եւ օժանդակ կառույցներում, Ադրբեջանը, որպես կանոն, փորձել է միջազգային իսլամական հանրությանը ներկայացնել Հայաստանից եկող մարտահրավերները՝ նշելով, որ Ղարաբաղյան հարցում իսլամական աշխարհի աջակցության կարիքն ունի: Մինչ օրս իսլամական կոնֆերանսի կողմից հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ ընդունվել են

բազմաթիվ բանաձեւեր, արվել են մի շարք հայտարարություններ, որոնցում Հայաստանի վերաբերյալ բավական կոչտ գնահատակամներ են տրվել:

Աղրբեջանի կողմից իրականացվող շարունակական քարոզության արդյունքում Հայաստանը ԻԿԿ բանաձեւերում հիշատակվել է որպես Աղրբեջանի մշակութային արժեքներն ու ռեսուրսները ոչնչացնող եւ մարդկության դեմ հանցագործություն իրականացրած մի երկիր, Հայաստանին կոչ է արվել անհապաղ դուրս բերել զորքերը աղրբեջանական «օկուպացված» տարածքներից, իրականացնել ՄԱԿ բանաձեւերը:

Բաքուն վերջին տարիներին նախաձեռնել է մեկ այլ քարոզարշավ («Արդարություն Խոջալուին»), որի նպատակը 1992թ. Խոջալուի դեպքերի՝ որպես Հայաստանի կողմից իրականացված «ցեղասպանության» միջազգայնացումն է: Սակայն վերջին շրջանում մեկ անգամ չէ, որ ի ցույց են դրվել Աղրբեջանի կողմից Ղարաբաղյան պատերազմի վերաբերյալ ներկայացված լուսանկարների կեղծ լինելու եւ, ընդհանրապես, Աղրբեջանի կողմից պատերազմի դեպքերին ոչ համարժեք գնահատակամներ տալու հանգամանքները:

2010թ. փետրվարի սկզբին Ուգանդայում տեղի ունեցած ԻԿԿ խորհրդարանական վեհաժողովի (ԽՎ) վեցերորդ նստաշրջանն ընդունեց բանաձեւ, որում անդամ պետությունների խորհրդարաններին կոչ արվեց Խոջալուի դեպքերը ճանաչել որպես աղրբեջանցիների «ցեղասպանություն», որը, ըստ փաստաթղթի, Աղրբեջանի քաղաքացիների դեմ իրականացրել են հայկական զինված ուժերը: Բանաձեւը կոչ է անուն խլամական պետությունների խորհրդարաններին ազգային եւ միջազգային մակարդակներում աջակցել քարոզարշավին: Նշենք, որ 1999-ին հիմնված եւ 2001-ին ի պաշտոնե բացված ԻԿԿ խորհրդարանական վեհաժողովը, որի նշտական ներկայացուցչությունը գտնվում է Թեհրանում, միջազգային ամենամեծ միջպառլամենտական կազմակերպություններից է, ունի 51 անդամ:

Խոջալուի հարցը խորհրդարանական վեհաժողովի օրակարգ էր մտցրել ԻԿԿ երկխոսության եւ համագործակցության երիտասարդական ֆորումը (ԵՀԵՖ), որն ստեղծվել է 2003-ին, Աղրբեջանի, իսկ ավելի ստույգ՝ Աղրբեջանի երիտասարդական կազմակերպությունների ազգային ասամբլեայի նախաձեռնությամբ: Կառույցը, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Ստամբուլում, վերջին տարիներին Հայաստանի դեմ ակտիվ աշխատանք է ծավալել: ԵՀԵՖ-ի համակարգողներից է Աղրբեջանի նախագահ Ի.Ալիեւի դուստրը՝ Լեյլա Ալիեւան, որը նաեւ նշված քարոզարշավի ակտիվիստներից է:

ԵՇԵՖ-ի գլխավոր քարտուղար, Ադրբեջանի ներկայացուցիչ Էլշադ Իսկամնդերովի համոզմամբ՝ Խոջալուին վերաբերող ԽՎ բանաձեւը եւ այն «գնահատականը», որ տրվեց այդ դեպքերին, քաղաքական եւ իրավական մեծ նշանակություն ունեն խնդրի միջազգային ճանաչման համար:

Նշենք, որ Իսլամական կոմֆերանսի շրջանակներում Խոջալուին վերաբերող հարցը բարձրացվել է նաեւ 2009թ. հուլիսին, կրկին ԵՇԵՖ-ի նախաձեռնությամբ, ԻԿԿ Իսլամական կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության (ISESCO) 10-րդ նստաշրջանի ժամանակ, որը տեղի ունեցավ Թունիսում: Հանդիպման ընթացքում նշված կազմակերպությունները ստորագրեցին հուշագիր, որը նախատեսում է աջակցել նշված քարոզարշավին՝ դրա շրջանակներում կազմակերպելով կրթական, գիտական եւ մշակութային միջազգային միջոցառումներ: Ըստ այդմ՝ ծրագրվում է, որպեսզի Խոջալուի «ողբերգության» պատմությունը ներառվի ԻԿԿ անդամ պետությունների դպրոցական դասագրքերում:

Միջազգային իսլամական ամենամեծ կազմակերպության կողմից վերը նշված բանաձեւի ընդունումը կարելի է դիտարկել որպես ապատեղեկատվության միջոցով Հայաստանի դեմ Ադրբեջանի շարունակական քարոզության՝ հաջողությամբ իրականացված հերթական դրսեւորում: Նշված փաստը թույլ է տալիս ենթադրել, որ հետայսու Խոջալուին վերաբերող դրույթը կներառվի ԻԿԿ գագաթաժողովների, արտաքին գործերի նախարարների եւ այլ ծեւաչափի հանդիպումների օրակարգում եւ, ըստ ամենայնի, տեղ կգտնի հայ-ադրբեջանական հականարտության մասին կազմակերպության հետագա բանաձեւերում: Միեւնույն ժամանակ, չի բացառվում, որ որոշ իսլամական պետությունների խորհրդարաններ կարձագանքեն Խորհրդարանական վեհաժողովի բանաձեւին:

Չնայած այն հանգամանքին, որ ԻԿԿ որոշումներն անդամ պետությունների համար միայն խորհրդատվական նշանակություն ունեն, իսլամական աշխարհում Հայաստանի դեմ քարոզության հետեւանքները մտահոգիչ են եւ, ի վերջո, կարող են նստվածք տալ: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ իսլամական պետությունները ՄԱԿ-ում հիմնականում քվեարկում են հօգուտ Ադրբեջանի, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հետ բարեկամական հարաբերություններ ունեցող մի քանի երկրների, որոնք շատ դեպքերում չեն մասնակցում քվեարկությանը:

Իսլամական կոնֆերանսն այն ֆորումն է, որտեղ Ադրբեջանը լավագույնս շահարկում է կրոնական համերաշխության գաղափարը, եւ հազիվ թե որեւէ իսլամական երկիր նման հարթակում հանդես գա այդ գաղափարի դեմ՝ վնասելով իր հեղինակությանը: Այս իրողությունը լայն

հնարավորություն է տալիս Բարվին՝ առանց ընդդիմախոսի անցկացնել իր համար շահեկան բանաձեւեր:

Անշուշտ, ԻԿԿ-ում Աղրբեջանի հաջողության իմանական գրավական-ներից մեկը Թուրքիայի անվերապահ աջակցությունն է: Վերջին շրջանում Միջին Արեւելքում Թուրքիան ակտիվացրել է իր քաղաքականությունը՝ բարելավելով հարաբերություններն Իրանի, ինչպես նաև արաբական երկրների հետ: Թե՛ Իրանը, թե՛ արաբական առանձին երկրներ, իսլամական կոնֆերանսում ազդեցիկ դիրքեր ունեն: Նախորդ տարիների համեմատ զգալիորեն աշխուժացել է նաև Աղրբեջանի եւ արաբական աշխարհի համագործակցությունը: Խոջալուի դեպքերի վերաբերյալ նման գնահատականը, ըստ Էռլյան, Թուրքիայի եւ Աղրբեջանի համատեղ աշխատանքի արդյունքն է:

Այդ իսկ պատճառով Հայաստանը պետք է համարժեքորեն արձագանքի եւ փորձի չեզոքացնել այն ռիսկերը, որոնք ծեւավորվում են իսլամական աշխարհում: Մինչ օրս բավարար միջազգային հնչեղություն չեն ստացել Մումգայիթի դեպքերը, նաև՝ Զուղայում երկու հարյուրից ավելի եկեղեցիների եւ 2005թ. դեկտեմբերին աղրբեջանական բանակի կողմից հայկական խաչքարերի ոչնչացման փաստերը:

Հայաստանը հնարավորություն ունի միջազգային ճակարդակներում փաստարկել Աղրբեջանի մշակութային արժեքները ոչնչացնելու՝ նաև իսլամական աշխարհից հնչող մեղադրանքները: Հայաստանը բազմաթիվ փաստերով կարող է ապացուցել, որ Արցախում եւ հարակից տարածքներում իսլամական պատմանշակութային արժեքները, որոնք մի մասով պարսկական ծագում ունեն, իմանականում պահպանված են: Ավելին, 2005թ. Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմն իր հովանու տակ է վերցրել Շուշիի պարսկական մզկիթը եւ դրա վերանորոգման համար պատրաստ է Իրանից մասնագետներ իրավիրել: «Շեն» իմանադրամի ջանքերով վերանորոգվել է Շուշիում գտնվող մեկ այլ մզկիթ:

Հայաստանի դեմ քարոզչական պատերազմում Աղրբեջանի կողմից օգտագործվող ապատեղեկատվությունը, ինչպես նաև քարոզչական բազմաթիվ այլ իրողություններ, ակնհայտ են դարձնում դրանց պարզունակությունն ու խոցելիությունը: Շատ դեպքերում նույնքան պարզունակ են նաև Հայաստանից Աղրբեջանի դեմ հնչող քննադատությունները:

## ԳՈՐԾԵՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՇՈՒՐԶ ՄԵԼԱԿ Սարուխանյան

### Միջուկային հիմնախնդիր

Վերջին ամիսներին իրանը ԵՄ-ի, «վեցնյակի» եւ ԱԵՄԳ-ի հետ բանակցություններում որդեգրել է կոշտ դիրքորոշում, որը, կարծես, փոփոխման ենթակա չէ: Իրանի հայտարարությունները, թե սկսել է 20% հարստացմամբ ուրան արտադրել, էլ ավելի են սրելու իրավիճակը եւ, ամենայն հավանականությամբ, հանգեցնելու են նոր պատժամիջոցների կիրառման: Ակնհայտ է, որ ուրանի հարստացման տոկոսաչափի բարձրացմանը զուգահեռ մեծանում է նաև ԱՄՆ-ի կամ Իսրայելի հետ ռազմական բախման հնարավորությունը:

Այս ֆոնին ամենակարեւոր հարցերից մեկն այն է, թե, ակնհայտորեն գիտակցելով այս ամենը, ինչու է իրանը գնում հարաբերությունների սրման: Պատասխաններից մեկը կարող է լինել այն, որ իրանն արդեն իսկ շատ մոտ է կանգնած միջուկային գենքի ստեղծմանը, իսկ հնարավոր կոնֆլիկտը կարող է պարզապես լեզիտիմացնել Իրանի միջուկային պոտենցիալը: Դայտնի ամերիկյան վերլուծարան Դ.Օլբրայթի կարծիքով, Իրանին, մինչեւ միջուկային տերություն դառնալը, մնացել է անցնել «ճանապարհի մեկ տասներորդ մասը»: Նշենք, որ միջուկային գենքի ստեղծման ավարտական փուլում Ջյուսիսային Կորեան գնաց միջազգային հանրության հետ հարաբերությունների սրման, անցավ ծանր պատժամիջոցների «միջով» եւ միայն հետո հայտարարեց միջուկային գենքի ստեղծման մասին: Իրանն այսօր, հավանաբար, գնում է նույն ճանապարհով՝ հաշվի առնելով, որ պատժամիջոցներն իր նկատմամբ կոշտ չեն կարող լինել, քանի որ համաշխարհային տնտեսությունն առանց իրանական նավքի կանգնի լուրջ խնդիրների առջեւ, իսկ հնարավոր պատժամիջոցները կլինեն ոչ նշանակալից:

ՄԱԿ ԱԽ-ը դեռեւս չի սկսել քննարկել պատժամիջոցների հարցն Իրանի դեմ: Դայտնի չէ՝ կկիրառվե՞ն դրանք ընդհանրապես, թե՞ ոչ: ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամ Չինաստանն արդեն հայտարարել է, որ դեմ է Իրանի դեմ պատժամիջոցների կիրառմանը, ինչը, հավանաբար, բավարար հիմք կարելի է համարել պնդելու, որ վետոյի իրավունք ունեցող ՊԵԿինը պատժամիջոցների ցանկացած կոշտ

տարբերակի դեմ է քվեարկելու: Սակայն ՄԱԿ Աևս ոչ մշտական անդամ-ների հետ կապված՝ իրավիճակը նույնպես ոյուրին չէ: Յաշվի առնելով թուրք-իրանական վերջին շրջանի ռազմավարական երկխոսությունը՝ Թուրքիան, որն այսօր ՄԱԿ Աևս ոչ մշտական անդամի աթոռ է գրադեցնում, պատժամիջոցների կիրառմանը դեմ է հանդես գալիս: Սակայն անսպասելիորեն պատժամիջոցների դեմ են հանդես եկել Բրազիլիան ու Լիբանանը:

Բրազիլիայի նախագահն անձանք ԱՄՄ պետքարտուղարին տեղեկացրել է, որ իրենք, ամենայն հավանականությամբ, չեն պաշտպանի պատժամիջոցների մասին որոշումը: Իսկ Լիբանանի իշխանությունները, չնայած երկրում որպես հիմնական հակառակորդ ունեն իրանամետ «Քիզբալլահ» ռազմաքաղաքական կազմակերպությունը, հավանաբար որոշակի պայմանավորվածություններ են ծերք բերել իրանի հետ՝ աջակցություն ցուցաբերելով նրան ՄԱԿ Աևս-ում ու, թերեւս, աջակցություն ստանալով ներլիբանանյան զարգացումներում: Բացառված չէ, որ իրանը Սիրիայի եւ «Քիզբալլահի» միջնորդությամբ է հասել Լիբանանի «իրանամետ» դիրքորոշմանը: 2010-ի փետրվարի 25-ին իրանի նախագահը Ղամասկոսում եռակողմ բանակցություններ է վարել Բ.Ասադի եւ «Քիզբալլահի» առաջնորդ Յ.Սասրալլայի հետ: Միեւնույն ժամանակ, ըստ որոշ վերլուծությունների, այս բանակցությունները մեկ իմաստ ունեն. Իրանի դեմ ռազմական գործողությունների սկսման դեպքում՝ ուժերի համատեղում հակահարված հասցնելու համար:

Բազմաթիվ երկրներ են հանդես գալիս պատժամիջոցների դեմ՝ պնդելով, որ իրանի միջուկային ծրագրի հետ կապված իրական խնդիր կա, սակայն պատժամիջոցները կվնասեն դիվանագիտական ժանապարհով միջուկային հիմնախնդրի լուծմանը: Այսօր իրանի հարեւաններից հիմնականում Թուրքիան է հանդես գալիս Թեհրանի միջուկային քաղաքականության ուղղակի պաշտպանությամբ: Թուրքիայի վարչապետ Ռ.Էրդողանը վերջին ամիսներին մի քանի անգամ հայտարարել է, թե իրանի միջուկային ծրագրերը չեն հակասում միջազգային իրավունքին եւ Թեհրանի պարտավորություններին, այդ իսկ պատճառով իսլամական հանրապետության դեմ կիրառվող ցանկացած ճնշում անօրինական է: Թուրքիայի այսօրինակ մոտեցումը պայմանավորված է վերջին երկու տարիներին թուրք-իրանական հարաբերությունների զգալի զարգացմանը. այսօր Թեհրանի եւ Անկարայի միջեւ ձեւավորվել է ռազմավարական գործընկերություն:

Սակայն, մեր համոզմանք, սա չէ թուրքական դիրքորոշման միակ պատճառը: Թուրքիան, որը նպատակ ունի ոչ միայն ատոմակայան

կառուցել, այլեւ զարգացնել միջուկային տեխնոլոգիաներն ու հետազոտությունները, իրանի հնարավոր միջուկային պետություն դառնալուց հետո ակնհայտորեն փորձելու է կիրառել «իրանական փորձը» սեփական միջուկային պոտենցիալի ստեղծման համար: Ժամանակին Պակիստանի եւ Հյուսիսային Կորեայի «իրավունքների պաշտպանությամբ» իրանն էր հանդես գալիս, որն այսօր մեծ շանսեր ունի դառնալու աշխարհի հինգերորդ չճանաչված միջուկային տերությունը: Ինչպես ժամանակին թերի էին պատկերացումները Հյուսիսային Կորեայի եւ Պակիստանի միջուկային ծրագրերի մասին, այդպես էլ կարող են դրանք լինել իրանի առնչությամբ:

### **Իրան ու տարածաշրջանային հակասությունները**

Հնարավոր ռազմական բախումից խուսափելու համար իրանն այսօր ակտիվորեն ապակյունացնում է տարածաշրջանը՝ նոր խնդիրներ ստեղծելով ԱՄՆ-ի համար եւ պատրաստվելով հնարավոր հակահարվածի: Վերջին շրջանում իրանն այս առումով կենտրոնացել է իրաքի եւ Եմենի վրա:

Եմենում հարավի ու հյուսիսի, ինչպես նաև տարբեր ցեղախմբերի միջեւ սրվող իրավիճակը բավական ակտիվ կերպով օգտագործվում է իրանցիների կողմից: Իրանի աջակցությունը հիմնականում ստանում են Եմենի շիաները: Խնդիրն այն է, որ Եմենի եւ Սաուդյան Արաբիայի սահմանին բնակվող շիա գեյդիտները չեն երթարկվում ոչ Եմենի ու Սաուդյան Արաբիայի իշխանություններին, ոչ էլ ընդդիմադիր «Հարավային շարժմանը»: Զեյդիտներին հիմնական ֆինանսական եւ ռազմական աջակցություն է ցույց տալիս հենց իրանը, որը կարող է նրանց, անհրաժեշտության դեպքում, օգտագործել Եմենում եւ Սաուդյան Արաբիայում՝ իրավիճակը սրելու համար: Բացի գեյդիտներից, իրանը կապեր ունի «Հարավի շարժման» մի շարք գործիչների հետ: Բուն «շարժումը» միատարր չէ, այլ կազմված է տարբեր առաջնորդներ ունեցող կազմակերպություններից ու կլաններից, որոնց միավորող միակ նպատակը «հյուսիսային» Ալ-Ախմար կլանի տնտեսական գերիշխանության սահմանափակումն է: Այս կլանները կապված են տարբեր պետությունների հետ: «Հարավային շարժման» առաջնորդներից մի քանիսը բոլորի ակցիաներ են կազմակերպում իրանական, մյուսները՝ ամերիկյան ու անգլիական, երրորդները՝ կանաչ դրոշներով, որոնք խորհրդանշում են ողջ հալածական աշխարհը: Եմենում ստեղծված իրավիճակը, փաստորեն, իրանին հնարավորություն է տալիս ԱՄՆ-ի հետ ռազմական բախման դեպքում լուրջ անկայունություն մտցնել Արաբական թերակղզում: Այս

հնարավորությունը, միեւնույն ժամանակ, պետք է կանխարգելիչ դեր խաղա ԱՄՆ ռազմական հարվածների համար:

Մյուս կողմից՝ վերջին շրջանում Իրանը վերսկսել է ներիրաքյան զարգացումներին իր ակտիվ մասնակցությունը: Իրաքի նախկին շիա վարչապետ Ա.Ալաուիի դաշինքը սունճի ուժերի հետ, որի հովանավորն է Միացյալ Նահանգները, մարտի 7-ի խորհրդարանական ընտրություններում կարող էր հանգեցնել ներդավանանքային շիա-սունճի հակասությունները հաղթահարած ուժերի հաղթանակին, որի արդյունքում Իրաքում կստեղծվեր ավելի կայուն կառավարություն՝ իմանված թե՛ շիաների, թե՛ սունճների վրա: Սակայն Իրաքի գերագույն դատարանը Ալաուիին աջակցող «Ազգային երկխոսության ճակատը» ներկայացնող 145 ակտիվ քաղաքական գործիչների մերժեց գրանցել որպես թեկնածու, ինչի արդյունքում ամերիկացիների կողմից աջակցություն ստացած ճակատը, որի հաղթանակի դեպքում Ա.Ալաուին կարող էր դառնալ վարչապետ, ընտրություններին մասնակցեց թույլ կազմով: Ըստ միջազգային մամուլի եւ վերլուծությունների, Իրաքի գերագույն դատարանի որոշման եւ Ա.Ալաուիի հնարավոր հաղթանակի դեմ ընթացող գործընթացների հետեւում կանգնած է հայտնի իրաքյան քաղաքական գործիչ Ա.Չալարին, որը մինչեւ 2004-ը ակտիվորեն համագործակցում էր ամերիկյան եւ բրիտանական իշխանությունների հետ: 2004-ին նրան պաշտոնապես մեղադրեցին Իրանին ամերիկյան գաղտնիքներ փոխանցելու մեջ, ինչից հետո նրա դաշինքը Վաշինգտոնի հետ պարտվեց: Վերջին տարիներին Չալարին դարձել է Իրաքում Իրանի իմանական դաշնակիցներից մեկը եւ ակտիվորեն խափանում է Իրաքում իրավիճակի կառավարելիության ուղղված ամերիկյան քայլերը: Ա.Ալաուին, որը Չալարիի հեռավոր ազգականն է, գերագույն դատարանի որոշումից հետո հայտարարեց, որ դրա հետեւում երրորդ երկիր է կանգնած: Գրեթե բոլորի համար ակնհայտ է, որ խոսքն Իրանի մասին է, ուր շատ հաճախ այցելում եւ ամենաբարձր մակարդակներով հանդիպումներ է իրականացնում Ա.Չալարին:

Միեւնույն ժամանակ, «Ազգային երկխոսության ճակատի» տապալման գործում մեծ է նաև քրդական ուժերի ավանդը, որոնք այսօր աջակցում են Իրանին՝ Իրաքում շիա-սունճի դաշինքի ստեղծման խափանման գործում: Մարտի 7-ի ընտրություններից հետո էլ կարելի է ասել, որ Իրաքում իրավիճակը չի կարգավորվելու: Կարծիք կա, թե քաղաքացիական պատերազմի հնարավոր վերսկսման համար Իրաքում նպաստավոր իրավիճակ է հասունացել, ինչը կարող է ստիպել Վաշինգտոնին զորքերը դուրս չհանել երկրից, ինչն, իր հերթին, թույլ չի տա նոր ուժեր ուղարկել Աֆղանստան՝ իրավիճակը կարգավորելու համար:

## Իսրայելի հնարավոր հարվածը Իրանին

ԱՄՆ Արտաքին հարաբերությունների հեղինակավոր խորհուրդը դեռևս 2009թ. նոյեմբերին հրատարակեց Սթիվեն Սայմոնի «Իսրայելի հարվածն Իրանին» գեկույցը, որտեղ հնարավոր էր համարում իսրայելի կողմից ռազմական հարվածներն Իրանի միջուկային կառույցներին: Սակայն, ըստ նրա վերլուծության, նման հարվածը մի քանի պատճառ-ներով հարված է նաեւ ամերիկյան շահերին: Դրանցից հիմնականներն են.

1. Չնայած հարվածը կիրականացնեն իսրայելցիները՝ ԱՄՆ-ը կդառնա բախման մասնակից իրանական հնարավոր հակահարվածի պատճառով:

2. Հարվածները կրարձրացնեն նավթի գները, ինչը կապակայունացնի ամերիկյան տնտեսության վերականգնման գործընթացը:

3. Մեծ հարված կիասցվի Օբամայի՝ իսլամական աշխարհի հետ հարաբերությունների կարգավորմանը:

4. Խոշոր հաշվով չի լուծի Իրանի միջուկային հիմնախնդիրը:

5. «Համասն» ու «Հիզբալլահը» Իրանի հրամանով պատերազմ կսկսեն Իսրայելի դեմ արաբա-իսրայելական հակամարտության գոտում եւ նոր ապակայունացում կմտցնեն տարածաշրջանում:

Սակայն այսօր հայտնի չէ, թե ինչ պետք է անի Միացյալ Նահանգները, եթե Իսրայելը որոշի հարվածել Իրանին: ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Զ.Բժեզինսկու կարծիքով, ամեն գնով պետք է կանգնեցնել Իսրայելին: The Daily Beast կայքին տված հարցազրույցում նա ասում է, որ Թել Ավիվին կանգնեցնելու համար պետք է դիմել ցանկացած քայլի. «Նրանք պետք է հատեն մեր օդային տարածքն Իրաքում: Իսկ մենք ի՞նչ, պետք է նստենք ու նայենք»: Խոսքն այն մասին է, որ ամերիկացիները պետք է թույլ չտան իսրայելական ինքնաթիռներին հատել Իրաքի օդային տարածքը Իրանին հարվածելու նպատակով: Հաշվի առնելով այն, որ Թուրքիան, ամենայն հավանականությամբ, իսրայելական օդուժին նույնպես կմերժի օգտագործել իր օդային տարածքը, Թել Ավիվի ռազմական գործողություններն Իրանի դեմ բավական կրարդանան: Մեկ այլ հարցազրույցում Զ.Բժեզինսկին ասում է, որ Իրանին հարվածելը կիանցեցնի տարածաշրջանից ԱՄՆ դուրսմղմանը, եւ Իսրայելը պետք է հասկանա, որ «առանց մեզ կարող է գոյատել 10 կամ 20 տարի, սակայն վերջ ի վերջո վատ կավարտի իր պատմությունը»:

Վերլուծելով ամերիկյան մամուլը ու Իրանի հարցով վերջին շրջանում հրատարակված հետազոտությունները՝ կարելի է ասել, որ Վաշինգտոնն

այսօր ակնհայտորեն պատրաստ չէ Թեհրանի հետ ռազմական բախման: Սա, հավանաբար, գիտակցում են թե՝ հսրայելում, որը կարող է ստիպված լինել սեփական ուժերով լուծել «իրանական հիմնախնդիրը», թե՝ իրանում, որտեղ ավելի հաճարձակ են սկսել սեփական անվտանգության պաշտպանվածության մասին: Դատկանշական է, որ ամերիկյան մամուլում, այդ թվում՝ հեղինակավոր «The New York Times»-ում, սկսել են իրապարակվել տեսակետներ, թե անգամ Իրանի միջուկային տերություն դառնալուց հետո էլ պետք է շարունակել ճնշում գործադրել Թեհրանի վրա: Սա հեղափոխական զարգացում է Իրանի միջուկային ծրագրի ընկալման գործընթացում, որի անքակտելի մասն է դարձել այն փաստի գիտակցումը, որ շուտով, անկախ ԱՄՆ կամքից, աշխարհում կարող է հայտնվել նոր միջուկային տերություն:

## ՀԱՅՐԵՆԱՎԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐՑՈՅՑ ԻՍՐԱՅԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### Կարեն Վերանյան

Վերջին տասնամյակում Խրայելում բավական հաճախակի են դարձել հասարակության մեջ հայրենասիրության հիմնահարցի շուրջ կազմակերպվող հետազոտությունները:

Այս ուղղությամբ, մասնավորաբար, ակտիվ գործունեություն է ծավալում խրայելական «Հերցլիա» Քաղաքականության եւ ռազմավարության ինստիտուտը, որը վերջին շրջանում կենտրոնանում է Խրայելի բնակչության մեջ հայրենասիրության հիմնահարցի շուրջ իրականացվող սոցիոլոգիական հետազոտությունների վրա: Բավական հետաքրքիր են ինստիտուտի կողմից 2006–2008թ. անցկացված «Հայրենասիրությունը եւ Խրայելի ազգային անվտանգությունը» սոցիոլոգիական հետազոտության արդյունքները, որտեղ ներկայացվում են Խրայելի հրեա բնակչության հայրենասիրության տարրեր դրսեւորումները:

Կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ Խրայելի հրեա բնակչության մեջ հայրենասիրության դրսեւորումներն ընդհանուր առմամբ կայուն աճման միտում ունեն: Հետազոտության արդյունքները պարզել են նաև, որ Խրայելի հրեա բնակչությունում տիպիկ հրեա հայրենասեր են համարվում կրոնավորները, ինչպես նաև 45-ն անց մարդիկ: Հետազոտությունում ներկայացված են Խրայելի հրեա բնակչության հայրենասիրության առաջնային բաղադրիչները, որոնցից ստորեւ ներկայացնում ենք 10 հիմնականները՝ ըստ դրանց հարցման տոկոսային աստիճանավորման.

1. Սերն առ հայրենիք - 92%
2. «Աետության համար կռվելու» գաղափարի կարեւորության գիտակցումը - 90,5%
3. Երրայերենը - 89%
4. «Գոհիված հրեա զինվորների հիշատակի օրվա ազդարարնան» խորհրդանիշի կարեւորության գիտակցումը - 88%
5. Երուսաղեմի արժեքը - 88%
6. հրեական ինքնությամբ հպարտությունը - 88%
7. Խրայելում բնակվելը - 86%
8. պետության համար կռվելու անհատական պատրաստակամությունը - 85,5%

9. պետության տեխնոլոգիական ու գիտական ձեռքբերումներով հպարտությունը - 82,5%

10. ընտրություններին մասնակցությունը - 82%:

### Ազգային պատկանելություն

Սոցիարցումներում ներառված է ազգային պատկանելության ասպեկտը, եւ «որքա՞ն ես հպարտ իրեալինելով» հարցադրմանը հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 92%-ը, դրական է պատասխանել: Ընդ որում, 70%-ը իրեն համարել է շատ հպարտ, իսկ մնացյալ 22%-ը՝ բավարար հպարտ: Պետք է նկատել, որ ազգային պատկանելությամբ հպարտ իսրայելցի իրեաների համար առանցքայինը նրանց՝ հուդայականության հետ կապվածությունն է:

### Ազգային խորհրդանշներ

Սոցիոլոգիական հետազոտություններում ներառված են նաև այնպիսի վիճակագրական արդյունքներ, որոնք վերաբերում են հայրենասիրության դրսեւորման խորհրդանշների հարցախույզին: Հայրենասիրության խորհրդանշների ասպեկտի հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ իսրայելի հասարակությունն ընդիհանուր առնամբ խիստ զգայուն է իր ազգային խորհրդանշների նկատմամբ: Համաձայն դրանց, սիոնիստական կազմակերպություններն, առհասարակ, առավել շատ են իրենց աստղիացմուն ազգային խորհրդանշների հետ: Հայրենասիրության ընկալման հարցում ազգային խորհրդանշներին մեծ տեղ է հատկացնում նաև իսրայելի իրեա բնակչության տարեց հատվածը:

«Զայրանո՞ւմ եք, երբ մարդիկ ոտքի չեն կանգնում զոհված իրեա զինվորների հիշատակի ազդարարման ժամանակ» հարցախույզի արդյունքները ցույց են տալիս, որ իսրայելի իրեա բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 80%-ը, զայրանուն է, ընդ որում, 64%-ը՝ չափազանց շատ: «Իսրայելի պաշտպանության ուժերի համազգեստ կրելը մեծ առավելություն է» հարցադրմանը դրական է արձագանքել իսրայելի իրեա բնակչության մեծամասնությունը՝ 78%-ը, որից 60%-ը մեծապես համաձայնել է առաջադրված հարցադրման հետ, 18%-ն ուղղակի համաձայնել է:

Ազգային խորհրդանշների շարքում առանձնացվում է նաև իսրայելի ազգային դրոշը. «որքա՞ն եք բարկանում, երբ զգում եք, որ մարդիկ անհարգալից վերաբերմունք են ցուցաբերում իսրայելի դրոշի նկատմամբ» հարցման արդյունքների համաձայն, իսրայելի իրեա բնակչության 62%-ը չափազանց զայրանուն է, իսկ մնացյալ 17%-ը շատ է զայրանուն:

### Մեր եւ նվիրվածություն առ Հայրենիք

Կատարված հետազոտության ուղղություններից մեկը «իր երկրի համար կրպելու պատրաստականության» սոցիարցումն է, որն իրականացվում էր Խորայելի եւ Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության անդամ մի շարք երկրների համեմատականով։ Արդյունքները ցույց են տալիս, որ հարցման մասնակից երկրների շարքում ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Խորայելում, որի հրեա բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 85%-ը, պատրաստականություն է հայտնել անհրաժեշտության դեպքում կրպել սեփական երկրի համար։ Խորայելի ցուցանիշին հաջորդում են Ֆինլանդիայի (83), Միացյալ Նահանգների (63), Կանադայի (60), Իտալիայի (51) ու Ֆրանսիայի (50) արդյունքները։

Սոցիարցումը ներառում էր նաև «ինչքանո՞վ ես հայրենասեր» հարցադրումը, որի միջոցով համեմատական էր անցկացվում Խորայելի ու Միացյալ Նահանգների միջեւ։ Անփոփլած արդյունքների համաձայն, Խորայելի բնակչության 34%-ը իրեն համարում է ծայրահեղ հայրենասեր, 27%-ը՝ շատ հայրենասեր, իսկ 24%-ը՝ որոշ չափով հայրենասեր, այն դեպքում, եթե Միացյալ Նահանգների բնակչության 26%-ն է իրեն համարում ծայրահեղ հայրենասեր, իսկ 46%-ը՝ շատ հայրենասեր։

Քետաքրքրական է նաև հետեւյալ հարցադրումը. «որքա՞ն ես հպարտ՝ խորայելցի լինելով»։ Խորայելի հրեա բնակչության 77%-ը իրեն հպարտ է համարում, որ խորայելցի է, որից 45%-ը՝ շատ հպարտ, իսկ 32%-ը՝ բավարար հպարտ (2006թ.)։ 2006թ. արդյունքների համեմատությամբ, 2008թ. սոցիոլոգիական հետազոտությունում խորայելցի լինելու հպարտության կետում որոշակի աճ է նկատվել. Խորայելի հրեա բնակչության 84%-ը իրեն հպարտ է համարել, որից 53%-ը՝ շատ հպարտ, 31%-ը՝ բավարար հպարտ։

Սոցիարցման արդյունքներից մեկն էլ վերաբերում է «կլիմեմ իմ երկրի քաղաքացի, քան թե աշխարհի որեւէ պետության քաղաքացի» հարցադրմանը, որը նույնպես իրականացվել էր Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության անդամ երկրների ու Խորայելի համեմատականով։ Արդյունքների համաձայն, հարցմանը մասնակցած պետությունների շարքում Խորայելը զբաղեցնում է երկրորդ դիրքը՝ զիշելով միայն Միացյալ Նահանգներին։ Խորայելի արդյունքները գերազանցել են հարցմանը մասնակցած այնպիսի երկրների, ինչպիսիք են Հունգարիան, Կանադան, Լեհաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան եւ այլն, արդյունքները։

Իսկ «գերադասում եմ ապրել Խսրայելում, նույնիսկ եթե այդ տարածաշրջանում լինի միջուկային զենք ունեցող թշնամական երկիր» հարցադրմանը դրական է արձագանքել Խսրայելի հրեա բնակչության 86%-ը, որից 52%-ը մեծապես համաձայնել է հարցադրման հետ, մնացյալ 32%-ը՝ ուղղակի համաձայնել: Ասել է թե՝ միջուկային զենքի սպառնալիքը Խսրայելի հրեա բնակչության համար երկիրը լքելու պատճառ չի հանդիսանում:

Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, Խսրայելի հրեա բնակչությունն առանձնահատուկ տեղ է հատկացնում Երուսաղեմ քաղաքին՝ որպես հայրենասիրության առանցքային խորհրդանշներից մեկին: Դարցվածների շուրջ 42%-ը մեծ կարեւորություն է տալիս Երուսաղեմին՝ ելնելով քաղաքի պատմական, 25%-ը՝ կրոնական նշանակությունից:

## ՆԱՏՕ-Ի ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՈՒՐՋ ԲԵՆԻՀԱՄԻՆ Պողոսյան

2009թ. ապրիլին կայացած ՆԱՏՕ-ի հոբելյանական գագաթաժողովում կազմակերպության նորընտիր գլխավոր քարտուղար Անդերս Ռասմուսենին հանձնարարվեց ծեռնամուխ լինել կազմակերպության նոր ռազմավարական հայեցակարգի մշակմանը, որի վերջնական տարրերակը նախատեսվում է ընդունել 2010թ. աշնանը Լիսաբոնում կայանալիք ՆԱՏՕ-ի հերթական գագաթաժողովում:

Հյուսիսաւլանտյան դաշինքի կազմակերպության հիմնադրումից (1949թ.) ի վեր ընդունվել են վեց ռազմավարական հայեցակարգեր, որոնք արտացոլել են ՆԱՏՕ-ի հիմնական նպատակները փոփոխվող աշխարհաքաղաքական պայմաններում: Այժմ գործող հայեցակարգն ընդունվել է 1999թ.: Ռազմավարական հայեցակարգերը չափազանց կարեւոր փաստաթղթեր են, որոնք արտացոլում են միջնաժմանկետ հեռանկարում ՆԱՏՕ-ի գարգացման ուղղությունները, աշխարհում առկա կարեւորագույն հիմնախնդիրների նկատմամբ կազմակերպության դիրքորոշումները:

Նոր հայեցակարգի ընդունման ժամանակը պատահական չի ընտրված: 1999թ. աշխարհը դեռևս գտնվում էր ԱՄՆ գլխավորությամբ առաջնորդվող միաբեւեր համակարգում, բացակայում էին Արեւմուտքի գերիշխանությանն ուղղված հստակ սպառնալիքները, եւ մեկնարկում էր դեպի Արեւելք ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը: Այժմ իրավիճակը բոլորվին այլ է: 2001թ. ԱՄՆ-ում իրականացված ահարեկչական գործողությունները, իրաքում եւ հատկապես Աֆղանստանում ԱՄՆ արձանագրած ծախողումները, միջազգային ասպարեզում նոր գլոբալ ուժերի ի հայտ գալը (Չինաստան, Չնդկաստան, Բրազիլիա, որոշ չափով նաև Ռուսաստան), 2008թ. աշնանից սկսված համաշխարհային տնտեսական ծգնաժամը աշխարհաքաղաքական նոր իրողություններ են ծեւավորել՝ ՆԱՏՕ-ի համար նոր խնդիրներ եւ նարտահրավերներ ստեղծելով:

Ռազմավարական նոր հայեցակարգի մշակման շուրջ առաջարկություններ ներկայացնելու համար ծեւավորվել է փորձագետների հատուկ խումբ՝ ԱՄՆ նախկին պետքարտուղար Մաղլեն Օլբրայի գլխավորությամբ: Խմբի փոխնախագահն է աշխարհի խոշորագույն նավթային ընկերություններից մեկի՝ Ռոյալ Դաչ Շելլ-ի նախկին գլխավոր գործադիր տնօրեն Ջերոն Վան դեր Վերը: Այս հանգամանքը, ի դեպ, ժամանակակից

աշխարհում հսկա մասնավոր կորպորացիաների ունեցած զգալի ազդեցության եւս մեկ վկայությունն է: Փորձագետների խումբն արդեն անցկացրել է չորս սեմինար քննարկում (Լյուքսեմբուրգում 2009թ. հոկտեմբերի 16-ին, Սլովենիայում 2009թ. նոյեմբերի 13-ին, Օսլոյում 2010թ. հունվարի 14-ին եւ Վաշինգտոնի Ազգային պաշտպանական համալսարանում 2010թ. փետրվարի 23-ին):

Քննարկումների արդյունքում փորձագետների խումբը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարին է ներկայացնելու առաջարկությունների փաթեթ, որն էլ հետագա քննարկումների ընթացքում որոշակի վերափոխումների ենթարկվելով՝ դրվելու է ռազմավարական նոր հայեցակարգի հիմքում: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ գործընթացի շրջանակներում ՆԱՏՕ-ն քննարկումներ եւ խորհրդակցություններ է անցկացնում նաև կազմակերպության անդամ չհանդիսացող բազմաթիվ պետությունների հետ, որոնք համագործակցում են ՆԱՏՕ-ի հետ «Միջերկրական երկխոսության» (նախաձեռնությունը մեկնարկել է 1994թ. եւ այժմ ընդգրկում է յոթ պետություն՝ Ալժիր, Եգիպտոս, Իսրայել, Հորդանան, Մարոկկո, Թունիս, Մավրիտանիա), «Եվրաատլանտյան համագործակցության խորհրդի» (ստեղծվել է 1997թ. եւ ներառում է 50 պետություն այդ բվում ՆԱՏՕ-ի անդամ բոլոր 28 երկրները, խորհրդում ընդգրկված են նաև ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող նախակին ԽՄՀՄ 12 հանրապետությունները), «Ստամբուլի համագործակցության նախաձեռնության» (մեկնարկել է 2004թ., հիմնական նպատակն է նպաստել ՆԱՏՕ-ի եւ Մեծ Մերձավոր Արեւելքի երկրների միջեւ համագործակցության սերտացմանը) շրջանակներում:

Նոր ռազմավարական հայեցակարգի քննարկումների շրջանակում 2010թ. փետրվարին Մաղլեն Օլբրայի գլխավորած պատվիրակությունն այցելեց նաև Մոսկվա՝ հանդիպումներ ունենալով Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշենի եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ: Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում ունեցած ելույթի ժամանակ Օլբրայի, ներկայացնելով հայեցակարգի մշակման գործընթացը, հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն սպառնալիք չէ Ռուսաստանի համար, եւ կան բազմաթիվ ոլորտներ, որտեղ կողմերի շահերը համընկնում են: Միաժամանակ, նա հերթական անգամ պնդեց, որ ՆԱՏՕ-ն չի ընդունում ազդեցության գոտիներ կամ արտոնյալ շահեր ունենալու մեծ տերությունների հավակնությունները՝ հակազդելով դեռևս 2008թ. օգոստոսին Դմիտրի Մեդվեդեվի՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ ելույթում հնչեցված տեսակետներին:

ՆԱՏՕ-ի նոր հայեցակարգի մշակման շրջանակներում կարեւորությանը առանձնանում է 2010թ. փետրվարին Վաշինգտոնում անցկացված սեմինարը, որտեղ ՆԱՏՕ-ի պապայի մասին ԱՄՆ պատկերացումները ներկայացրեց Յիլարի Քլինթոնը: Ծրագրային բնույթ կրող այս ելույթում նա մանրանասն շարադրեց ԱՄՆ մոտեցումները ժամանակակից միջազգային կարեւոր հիմնախնդիրների վերաբերյալ: Նշելով, որ 1999թ. համեմատ աշխարհում արձանագրվել են բավական կտրուկ փոփոխություններ եւ ապագան այժմ շատ ավելի անորոշ է, քան ընդամենը մեկ տասնամյակ առաջ, Քլինթոնը հայտարարեց, որ, այնուամենայնիվ, ՆԱՏՕ-ի ստեղծման պահին նրա առջեւ դրված հիմնական խնդիրները՝ անդամ պետություններին անվտանգության երաշխիքների տրամադրում, աջակցություն եվրոպական ինտեգրացիոն գործընթացներին եւ տրանսատլանտյան կապերի ամրապնդում, շարունակում են պահպանել իրենց կարեւորությունը: ԱՄՆ պետքարտուղարն անդրադարձավ նաեւ ՆԱՏՕ-ի կողմից անդամ երկրների սահմաններից դուրս գործողություններ իրականացնելու խնդրին: Նշելով, որ արդեն այսօր կազմակերպությունը ներգրավված է նաև աստիճան մի շարք գործողություններում՝ Աֆղանստան, պայքար ծովահենների դեմ Սոմալիի ափամերձ շրջանում, իրաքում անվտանգության ուժերի համար վերապատրաստման դասընթացների անցկացում եւ այլն, Քլինթոնը հայտարարեց, որ ժամանակակից փոխկապակցված աշխարհում անհնար է արդյունավետ կերպով իրականացնել կազմակերպության անդամ երկրների պաշտպանությունը՝ պարփակվելով միայն դաշինքի աշխարհագրական սահմանների ներսում:

Ծեշտելով այն փաստը, որ ժամանակակից մարտահրավերներից քչերն են կրում բացառապես ռազմական բնույթ, ԱՄՆ պետքարտուղարը նշեց ՆԱՏՕ-ի շրջանակներում քաղաքացիական գործողություններ իրականացնելու կարեւորության մասին, որոնց անհրաժեշտությունը հատկապես մեծ է զգնաժամներին հաջորդող շրջանում, երբ էական նշանակություն է ստանում քաղաքացիական ենթակառուցվածքների վերականգնումը, բնակչության տարրական պահանջների բավարարման ուղղությամբ կոնկրետ քայլերի իրականացումը: Քլինթոնը նշեց, որ Աֆղանստանի փորձը եւս վկայում է այն մասին, որ ՆԱՏՕ-ն չի կարող արդյունավետ կերպով լուծել իր առջեւ ծառացած խնդիրները բացառապես ռազմական մեթոդներով:

Կարեւոր է նաեւ Քլինթոնի այն հայտարարությունը, թե ԱՄՆ գործող իշխանությունները (ի տարբերություն նախորդ վարչակարգի) Եվրամիությունը ՆԱՏՕ-ի մրցակից չեն համարում եւ ուժեղ Եվրոպան

դիտարկում են որպես ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի կարեւոր գործընկերներից մեկը: ԱՄՆ պետքարտուղարը պատրաստականություն հայտնեց համատեղ աշխատել Եվրամիության հետ վերջինիս ընդհանուր պաշտպանական քաղաքականության շրջանակներում՝ կողմերի առջեւ ծառացած մարտահրավերների արդյունավետ լուծնան նպատակով:

Խոսելով ռազմավարական նոր հայեցակարգում ընդգրկվելիք խնդիրների մասին՝ Քլինթոնը հատուկ առանձնացրեց նաեւ տեղեկատվական եւ էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները: Նշելով, որ էներգետիկ աղբյուրների մատակարարումների խափանման դեպքում պետությունները լուրջ ռազմավարական ռիսկերի առջեւ են կանգնում, Քլինթոնը կարեւորեց վերջերս ձեւավորված ԱՄՆ-Եվրամիություն էներգետիկ խորհրդի գործունեությունը՝ շեշտելով, որ ԱՄՆ-ը վճռական է տրամադրված էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացիայի խնդրում Եվրոպային աջակցելու գործում:

ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգի մշակման գործընթացի շրջանակներում էական նշանակություն ունեն ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերությունների հնարավոր զարգացումները: Ռուսաստանի հետ հարաբերությունները բավականաչափ կարեւոր են ՆԱՏՕ-ի համար, եւ պատահական չեն, որ Ճիլարի Քլինթոնն իր ելույթի մի զգալի հատված նվիրել էր հենց այդ խնդրին: Չքացառելով ՆԱՏՕ-Ռուսաստան համագործակցությունը հակահրթիռային պաշտպանության բնագավառում՝ նա հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն պետք է մշակի հակահրթիռային պաշտպանության սեփական համակարգ, որն ի վիճակի կլինի պաշտպանել Եվրոպական երկրներին: Քլինթոնը կոչ արեց Ռուսաստանին համագործակցել ՆԱՏՕ-ի հետ ինչպես հակահրթիռային պաշտպանության, այնպես ել միջուկային գենքի չտարածման խնդրում՝ փաստորեն ակնարկելով, որ անկախ Ռուսաստանի ցանկությունից, ՆԱՏՕ-ն ձեռնամուխ է լինելու հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի ձեւավորմանը, եւ պաշտոնական Մոսկվան, ցանկության դեպքում, ընդամենը կարող է միանալ այդ գործընթացին: Քլինթոնը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն սպառնալիք չէ Ռուսաստանի անվտանգությանը, եւ կազմակերպությունը ցանկանում է կառուցղական հարաբերություններ ունենալ այդ երկրի հետ: Միաժամանակ, նա հստակ բացասական վերաբերմունք արտահայտեց Եվրոպական անվտանգության վերաբերյալ նոր պայմանագրի ստորագրելու Ռուսաստանի առաջարկի առնչությամբ՝ հայտարարելով, որ ԱՄՆ-ը չի տեսնում նման պայմանագրի ստորագրման անհրաժեշտություն, իսկ Ռուսաստանի կողմից ներկայացված պայմանագրի նախագծում առաջ քաշված որոշ գաղափարներ կարելի է քննարկել

Եվրոպական անվտանգության խնդիրներով գրաղվող գործող կառույցներում, այդ թվում ԵԱՀԿ-ում եւ ՆԱՏՕ–Ռուսաստան խորհրդում:

Քլինթոնը բավական մանրամասն անդրադապ նաեւ ՆԱՏՕ–Ռուսաստան հակասություններին: Նա շեշտեց, որ ՆԱՏՕ–Ռուսաստան խորհրդն անհրաժեշտ է օգտագործել Ռուսաստանի նկատմամբ ճնշումներ գործադրելու համար, որպեսզի վերջինս կատարի Վրաստանի հանդեպ ստանձնած պարտավորությունները: Խորհրդի շրջանակներում ՆԱՏՕ-ն պետք է բարձրացնի նաեւ Ռուսաստանում մարդու իրավունքների եւ անհատի ազատությունների պաշտպանության խնդիրը, քանի որ պաշտոնական Մոսկվան պարտավորվել է հարգել այդ արժեքները: Ռուսաստանին առնչվող հատվածը Քլինթոնն ավարտեց երկու կողմերի համար ընդհանուր շահերի եւ սպառնալիքների մասին դատողություններով:

Փաստացի մերժելով Եվրոպական անվտանգության նոր պայմանագրի ստորագրման վերաբերյալ Ռուսաստանի առաջարկը եւ, միաժամանակ, զգալի կարեւորություն հաղորդելով Ռուսաստանում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին (ինչը Ռուսաստանի ներկայիս ղեկավարության կողմից միանշանակ մեկնաբանվում է որպես միջամտություն Ռուսաստանի ներքին գործերին եւ գունավոր հեղափոխության կազմակերպման փորձ՝ ԱՍՍ ղեկավարությունն, ըստ Էության, ավարտված է համարում Օբանայի վարչակազմի իշխանության գալուց հետո երկու երկրների հարաբերություններում սկսված «մեղամիսը»:

ՆԱՏՕ–Ռուսաստան հարաբերությունների հետագա զարգացման համատեքստում կարեւոր նշանակություն ունի նաեւ 2010թ. փետրվարի 5-ին Ղմիտրի Մեդվեդևի կողմից հաստատված Ռուսաստանի նոր ռազմական դոկտրինը: Այստեղ որպես թիվ մեկ արտաքին ռազմական սպառնալիք է նշվում ՆԱՏՕ-ին գլոբալ գործառույթներով օժտելու կազմակերպության ձգտումը, գործառույթներ, որոնք իրականացվում են միջազգային իրավունքի նորմերի խախտմամբ: Սպառնալիք է համարվուն նաեւ ՆԱՏՕ-ի անդամ երկրների ռազմական ենթակառուցվածքները Ռուսաստանի սահմաններին մոտեցնելու գործընթացը, որի իրականացման միջոցներից մեկն է համարվում ՆԱՏՕ-ի ընդարձակումը: Հետաքրքրական է նաեւ Ռուսաստանի ռազմական նոր դոկտրինի 20-րդ կետը: Այստեղ, մասնավորապես, նշվում է, որ Ռուսաստանն օրինական է համարում զինված ուժի կիրառումը Ռուսաստանի կամ նրա դաշնակիցների դեմ իրականացված ագրեսիան հետ մղելու, ինչպես նաեւ Ռուսաստանի սահմաններից դուրս գտնվող սեփական քաղաքացիների պաշտպանության ապահովման նպատակով: Գործնականում սա նշանակում է, որ Ռուսաստանն, օրինակ, իրեն իրավունք է վերապահում

զինված ուժ կիրառել ՀԱՊԿ-ի շրջանակներում ընդունված որոշումների հիման վրա: Ակնհայտ է, որ ռազմական դոկտրինում նման ձեւակերպումների ընդգրկումը լուրջ ազդեցություն է թողնելու ՆԱՏՕ–Ռուսաստան հարաբերությունների վրա:

Այսպիսով, եթե ԱՄՆ դիրքորոշումները ՆԱՏՕ–Ռուսաստան հարաբերությունների հեռանկարի վերաբերյալ իրենց արտացոլումը գտնեն կազմակերպության ռազմավարական նոր հայեցակարգի վերջնական տարրերակում, ինչի հավանականությունը բավական մեծ է՝ հաշվի առնելով ՆԱՏՕ-ում ԱՄՆ ունեցած կշիռը, ապա ՆԱՏՕ–Ռուսաստան հարաբերություններն ապագայում կրնորոշվեն առավել մեծ լարվածությամբ, ինչն իր հետեւանքները կթողնի նաև ՀԱՊԿ–ՆԱՏՕ, ինչպես նաև Ռուսաստան–Եվրամիություն հարաբերությունների վրա:

Միաժամանակ, ռազմական նոր դոկտրինում ՆԱՏՕ-ի ընդարձակումը որպես թիվ մեկ արտաքին սպառնալիք հռչակելով՝ Ռուսաստանը հստակ ակնարկում է, որ այլևս մտադիր չէ հաշտվել նախկին խորհրդային որեւէ հանրապետության՝ հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցելու գաղափարի հետ եւ պատրաստ է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր քայլերը զարգացումների նման ընթացքը կանխելու համար:

## ԱՆՇԵՏԱԶԳԵԼԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ

### Զբիգնելի Քժեղինսկի

Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի արտաքին քաղաքականությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Սի կողմից՝ գնահատել նպատակներն ու որոշումների ընդունման համակարգը, մյուս կողմից՝ գործնական մոտեցումները եւ դրանց իրազործումը:

Ի պատիվ Օբամայի՝ պետք է նշել, որ նա հիրավի տիտանական ջանքեր գործադրեց, որպեսզի փոխի արտաքին աշխարհի նկատմամբ ԱՄՆ վերաբերմունքն ու երկիրն առավել համաչափորեն ներգրավի 21-րդ դարի ձեւավորվող պատմական համատեքստում: Մեկ տարուց էլ պակաս ժամանակահատվածում նախագահը լիովին վերանայեց մի քանի կարեւոր աշխարհաբարաքական հարցերի վերաբերյալ ամերիկյան արտաքին քաղաքականության հայեցակարգը.

❖ իսլամը թշնամի չէ, եւ Միացյալ Նահանգների ներկայիս դերն աշխարհում չի բնորոշվում «ահաբեկչության դեմ գլորալ պատերազմով»,

❖ Խսրայելի ու Պաղեստինի միջեւ հարատեւ խաղաղության հասնելու գործում ԱՄՆ-ը խաղալու է արդար եւ հաստատական միջնորդի դեր,

❖ Վաշինգտոնին հարկավոր է իրանի հետ վարել լուրջ բանակցություններ՝ նրա միջուկային ծրագրի, ինչպես նաև այլ հարցերի շուրջ,

❖ «Թալիբան» շարժման վերահսկողության տակ գտնվող Աֆղանստանի գավառներում ապստամբական շարժման դեմ պայքարը պետք է լինի առավելապես քաղաքական, այլ ոչ ռազմական,

❖ Միացյալ Նահանգները պետք է հարգի լատինամերիկյան երկրների նրանկատությունը մշակութային ինքնության եւ պատմական անցյալի նկատմամբ, ինչպես նաև ընդլայնի շփումները Կուբայի հետ,

❖ ԱՄՆ-ը պետք է առավել եռանդում ջանքեր գործադրի սեփական միջուկային գինանոցի կրծատման համար եւ շարժվի դեպի գլխավոր նպատակը՝ աշխարհը միջուկային գենքից լիովին ազատագրելը,

❖ գլոբալ խնդիրների լուծման ժամանակ հարկավոր է Զինաստանին վերաբերվել ոչ միայն որպես տնտեսական, այլեւ որպես աշխարհաբարաքական գործընկերոց,

❖ ամերիկա-ռուսական հարաբերությունների բարելավումը համապատասխանում է երկու կողմերի շահերին, սակայն, միաժամանակ, պետք

Է ընդունել այն աշխարհաքաղաքական իրողությունը, որ ձեւավորվել է «սառը պատերազմի» ավարտից հետո, այլ ոչ թե փորձել վերափոխել այն,

❖ անհրաժեշտ է անդրատլանտյան միասնական գործընկերային հարաբերություններին տալ առավել լուրջ նշանակություն, մասնավորապես, անհամաձայնություններն ու «ճեղքվածքները» փոխհարաբերություններում հաղթահարելու համար, որոնք առաջացել են վերջին մի քանի տարիների ապակառուցողական դիմակայության պատճառով:

Դեռևս շատ վաղ է նախագահի՝ իր առաջնայնություններին հետեւելու վճռականությանը միանշանակ գնահատական տալ, քանզի լուրջ թեմաների մեջ մասը ներառում է երկարաժամկետ խնդիրներ, որոնք պահանջում են տեւական ջանքեր: Սակայն կան անհետաձգելի հարցեր, որոնք արդեն մոտակա հեռանկարում լինելու են նրա ընդունակության ու վճռականության դժվարին փորձություն. իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը, իրանի միջուկային հավակնությունները եւ աֆղանապակիստանյան մարտահրավերը:

### **Իսրայելա-պաղեստինյան գլուխկոտրուկ**

Առաջին անհետաձգելի մարտահրավերն, անշուշտ, խաղաղության գործընթացն է Մերձավոր Արեւելքում: Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարվածահարությունը չափից ավելի ձգձգվեց, ու եթե միջոցներ չձեռնարկվեն, այն կարող է կործանարար հետեւանքներ ունենալ թե՛ պաղեստինցիների, թե՛ ողջ տարածաշրջանի, թե՛ Միացյալ Նահանգների համար եւ, վերջին հաշվով, վնասել իսրայելին: Այդ մասին մոդայիկ չէ խոսել, սակայն կասկած չի հարուցում այն փաստը, որ, արժանիորեն կամ անարժանորեն, ԱՄՆ-ի հանդեպ թշնամական վերաբերմունքը Մերձավոր Արեւելքում եւ, առհասարակ, մուսուլմանական աշխարհում, մեծ նասամբ, բացատրվում է այդ ձգձգված հակամարտության հետեւանքով առաջացած արյունահեղությամբ եւ արաբ բնակչությանը պատճառված տառապանքներով: Բեն Լադենի կողմից սեպտեմբերի 11-ի ահաբեկչության արդարացումը հիշեցնում է, որ Միացյալ Նահանգներն ինքը իսրայելա-պաղեստինյան գլուխկոտրուկի գոհ է հանդիսանում:

Այսօր, Արեւմտյան ափի ավելի քան 40-ամյա իսրայելական բռնազավթումից եւ 30-ամյա խաղաղ բանակցություններից հետո, միանգամայն ակնհայտ է, որ ո՞չ իսրայելցիները, ո՞չ պաղեստինցիներն ի

Վիճակի չեն ինքնուրույն լուծել այս կոնֆլիկտը: Կան դրա բազում բացատրություններ, սակայն գլխավոր պատճառն այն է, որ պահեստինցիները չափից ավելի անջատ են եւ թույլ, որպեսզի կայացնեն խաղաղության գործընթացի առաջխաղացման համար անհրաժեշտ կարեւոր որոշումներ, իսկ իսրայելցիները չափից ավելի անջատ են եւ ուժեղ, որպեսզի առաջադիմն այս հարցում: Ահա թե ինչու է հարկավոր վճռական արտաքին նախաձեռնություն, որը կսահմանի վերջնական կարգավորման հիմնարար բնութագրիները, ինչը թույլ կտա երկու կողմերին անհապաղ սկսել լուրջ բանակցություններ, եւ այդ նախաձեռնությունը կարող է ելնել միայն ԱՄՆ-ից:

Սակայն անհրաժեշտ արտաքին ազդակը, որը կհամապատասխանի ամերիկացիների շահերին եւ հնարավորություններին, դեռևս չի տրվել: 2009թ. գարնանը բարձրացնելով բնակավայրերի հարցը, իսկ այնուհետեւ իսրայելյան կառավարության կողմից հակահարված ստանալով ու նահանջելով՝ Սպիտակ տան վարչակազմն ամրապնդեց կոշտ գծի կողմնակիցների դիրքերն իսրայելում եւ թուլացրեց այն պահեստինցիներին, որոնք առավել մեղմ գծի հետեւորդ են: Ավելի ուշ, ՄԱԿ Գլխավոր վեհաժողովի ամենամյա նստաշրջանում, բաց թողնվեց Սիացյալ Նահանգների տեսակետը միջազգային հասարակական կարծիքի հետ համաձայնեցնելու հնարավորությունը: Օբաման, հնարավորությունից օգտվելու փոխարեն, պարզապես իսրայելցիներին ու պաղեստինցիներին կոչ արեց բանակցությունները վարել բարի մտադրություններով:

Գոյություն ունեցող համաշխարհային կոնսենսուսը կարող է ցատկահարթակ ծառայել օրակարգի չորս հիմնարար կետերի շուրջ բանակցությունների համար:

**Առաջին.** պետք չէ պաղեստինցի փախստականներին ներկայիս իսրայելի տարածք վերադարձնալու իրավունք տալ, քանզի չի կարելի սպասել, թե իսրայելը հանուն խաղաղության ինքնասպանություն կգործի: Փախստականները պետք է վերաբռնակեցվեն պաղեստինյան պետությունում՝ ստանալով փոխհատուցում ու, թերեւս, կարեկցանք՝ կրած տառապանքների համար: Պաղեստինի ազգային ազատագրության շարժմանը դժվար կլիմի սրա հետ հաշտվել, բայց այլ ելք չկա:

**Երկրորդ.** Երուսաղեմը հարկավոր է բաժանել, եւ բաժանել արդարացիորեն: Իսրայելի մայրաքաղաքն, անշուշտ, մնալու է Արեւմտյան Երուսաղեմուն, իսկ Արեւելյան Երուսաղեմը կդառնա պաղեստինյան պետության մայրաքաղաքը: Ինչ վերաբերում է Յիհ քաղաքին, ապա բաժանումը կլիմի ըստ միջազգային համաձայնագրի: Եթե Երուսաղեմի հարցում արդարացի

փոխգիծումը չլինի կարգավորման բաղկացուցիչ մաս, ապա պաղեստինցիները ողջ Արեւադաշտում ափի տարածքում կշարունակեն վրդովմունք արտահայտել եւ կիրաժարվեն խաղաղ գործընթացից: Թեպետ իսրայելցիներին դժվար կլինի նման բնույթի փոխգիշման գնալ, սակայն առանց դրա հաշտության մասին խոսք լինել չի կարող:

**Երրորդ.** Կարգավորումը պետք է հիմնվի 1967թ. սահմանազատման գծի վրա, սակայն տարածքների փոխանակման պայմանով, որ մեծ բնակավայրերը միացվեն իսրայելին ու դադարեցվի պաղեստինյան պետության տարածքի հետագա կրծատումը: Ընդ որում, իսրայելին հարկ է լինելու Պաղեստինի տարածքի կորուստը փոխհատուցել իսրայելական հյուսիսային եւ հարավային հողերի հաշվին, որոնք սահմանակից են Արեւադաշտում ափին: Կարեւոր է հիշել, որ թեեւ ըստ 1967թ. սահմանազատման՝ իսրայելցիներն ու պաղեստինցիները քանակական հարաբերությամբ գրեթե հավասար են, պաղեստինյան տարածքը կազմում է նախկին բրիտանական նախատի սոսկ 22 տոկոսը, մինչդեռ իսրայելականը 78 տոկոս է:

**Չորրորդ.** ԱՄՆ-ը կամ ՆԱՏՕ-ն պարտավոր է իր վրա վերցնել Հորդանան գետի երկայնքով զորքերի տեղակայումը: Նման որոշումն իսրայելի անվտանգությանը կիաղորդի ռազմավարական խորություն եւ կնքազեցնի նրա մտավախությունը, թե անկախ Պաղեստինը երբեւից կառող է արարների համար իսրայելի վրա հարձակման պլացդարմ ծառայել:

Եթե Օբաման ՍԱԿ Գլխավոր վեհաժողովի սեպտեմբերյան նստաշրջանում ընդուներ ողջ աշխարհի կողմից հավանության արժանացած այս ծրագիրը, ապա վիթխարի ազդեցություն կգործեր իսրայելցիների ու պաղեստինցիների վրա եւ անմիջապես կապահովեր միջազգային ընկերակցության աջակցությունը: Սույն ծրագրի մերժումը բաց թողնված հնարավորություն է, հատկապես այն պատճառով, որ երկու պետությունների նաև նաև կազմությամբ կայացած որոշումը՝ որպես իսրայելցիների եւ պաղեստինցիների միջեւ ու տարածաշրջանի ներսում հաշտեցման կենսունակ բանաձեւ, սկսում է կորցնել գորավչությունը: Առավել եւս, կան բոլոր տվյալները, որ Միացյալ Նահանգները կորցնում է արաբական աշխարհի բարեհաճությունն ու վստահությունը, որոնք Օբաման իր հունիսյան ճառով ծեռք էր բերել Կահիրենում:

Հավանաբար, պաղեստինցիներին սփոփելու կամ, թերեւս, իր վճռականությունը հաստատելու համար՝ Օբաման ՍԱԿ Գլխավոր վեհաժողովում արտասահմած ճառում կոչ արեց սկսել կարգավիճակի

շուրջ բանակցությունները եւ պարզորոշ հասկացրեց, որ բանակցությունների վերջնական նպատակը «կենսունակ, անկախ, հստակ սահմաններով պահեստինյան պետության» ստեղծումն է, «որը վերջ կտա 1967թ. սկսած բռնազավթմանը»:

## Իրանական մարտահրավեր

Եվս մեկ անհետաձգելի ու խիստ վլուանգավոր մարտահրավեր է նետված Օքամային Իրանի կողմից, եւ շատ բան կախված է լինելու դրան համարժեք պատասխանելու նրա ունակությունից: Խոսքն իրանական միջուկային ծրագրի իրական բնույթի եւ տարածաշրջանում թեհրանի դերի մասին է: Օքաման մտադիր է ուշադրությամբ ուսումնասիրել Իրանի հետ լուրջ բանակցություններ վարելու հնարավորությունը՝ չնայած ներքին (եւ մասամբ արտասահմանյան) քարոզչությանը եւ անգամ սեփական թիմի երկրորդ էշելոնի որոշակի հակազդեցությանը: Այդ մասին չքարձրածայնելով՝ նա հասկացրեց, որ խնդրի ռազմական լուծումն ամենաքիչ ընդունելի տարբերակն է, թեև, ինչպես դեռ մոդայիկ է ասել, «ոչ մի տարբերակ առայժմ չեղյալ չի հայտարարված»: Միաժամանակ, հաջող բանակցությունների հեռանկարները չնչին են:

Երկու առանցքային հարց բարդացնում է իրավիճակը:

**Առաջին.** ցանկանո՞ւմ են, արդյոք, իրանցիներն առհասարակ երկխոսության մեջ մտնել եւ ընդունա՞կ են նրանք բանակցություններում լինել լուրջ եւ հուսալի գործընկեր: ԱՄՆ-ը պետք է իրատեսորեն մոտենա այս տեսակետի քննարկմանը, քանզի ժամանակը հետ պտտել անհնարին է: Իրանցիներն ունեն ուրամի հարստացման հնարավորություն, եւ նրանք չեն պատրաստվում դրանից օգտվելուց իրաժարվել: Առավել խիստ տեսչական ռեժիմի կիրառման ճանապարհով, հավանաբար, հաջողվի թույլ չտալ Իրանին ստանալու մարտական ուրան կամ պլուտոնիում: Այնուհանդերձ, եթե նույնիսկ Միացյալ Նահանգներն ու նրա գործընկերները կառուցողական մոտենան բանակցություններին, իրանցիներն իրենք կարող են տապալել դրական արդյունքի հասնելու ցանկացած լուրջ հեռանկար: Արդեն բանակցությունների գործընթացի սկզբից եւեթ Իրանի հանդեպ վստահությունը խախտվեց, ինչը դժվարացրեց խոստումնալից փոխզիջման ձեռքբերումը Ռուսաստանի եւ Ֆրանսիայի մասնակցությամբ, որոնք իրանական հարստացված ուրանի մշակման հարցում ծառայություններ էին առաջարկել:

**Երկրորդ.** պատրա՞ստ է, արդյոք, Վաշինգտոնը համբերությամբ վարել

բանակցությունները՝ «զեղջ անելով» մյուս կողմի հոգեմտածելակերպին: Կարո՞՞ղ են բանակցությունները հաջողությամբ պսակվել, եթե ԱՄՆ-ը այսուհետեւ էլ իրապարակայնորեն իրանի վրա կախի ահաբեկչական պետության պիտակը, որին չի կարելի վստահել, որի դեմ անհրաժեշտ է պատժամիջոցներ կիրառել կամ անգամ ռազմական գործողություն նախապատրաստել: Նման մարտավարությունը ծերնտու կլինի ամենամոլեռանդ իրանական «բազեներին» եւ ազգայնականությունը իրապուրիչ կդարձնի բնակչության լայն շերտերի համար, ինչպես նաև որեւէ ծերով կհարթեցնի վերջերս նկատված պառակտումը առավել ազատական կարգի կողմնակիցների եւ մոլեռանդական տիրապետությունը հավերժացնել ցանկացողների շարքերում:

Այս պահերը պետք է նկատի ունենալ, եթե լրացուցիչ պատժամիջոցներն անհրաժեշտ լինեն: Դարձավոր է հոգ տանել, որ պատժամիջոցները լինեն քաղաքականապես խելամիտ եւ մեկուսացնեն վարչակարգը, որպեսզի չհամախմբեն իրանցի բնակչությանը: Այդ միջոցները պետք է իբրեւ պատիժ հանդիսանան իշխանությունում գտնվողների, բայց ոչ իրանական միջին խավի համար: Չմտածված եւ նվաստացուցիչ պատժամիջոցների կիրառման անցանկալի արդյունքը կարող է լինել հասարակ իրանցիների մոտ այն տպավորության ստեղծումը, թե Միացյալ Նահանգների նպատակն է՝ Թեհրանին թույլ չտալ իրագործել խաղաղ ատոմի ծրագիրը: Դա, առանց որեւէ կասկածի, կսանձագերծի ազգայնականությունը եւ ատելություն կառաջացնի իրանում:

Ավելին, նույնիսկ քաղաքականորեն իհմնավորված պատժամիջոցների ընդունումն, ամենայն հավանականությամբ, կդժվարանա այլ երկրների հակազդեցության պատճառով: Չինաստանը, հաշվի առնելով նրա կախվածությունը մերձավորարեւեյան եւ, հատկապես, իրանական նավթից, երկյուղում է սրացող ճգնաժամի հետեւանքներից: Ռուսաստանի դիրքորոշումը երկիմաստ է, քանզի լինելով Եվրոպա եներգակիրների խոշորագույն մատակարարը, նա կարող է շահագրգիռ լինել Պարսից ծոցի տեւական ճգնաժամով, որը կբարդացնի իրանական նավթի մուտքը Եվրոպական շուկա: Բացի այդ, ռուսական աշխարհաքաղաքականության տեսանկյունից, Պարսից ծոցի հակամարտության հետեւանքով նավթի գնի կտրուկ աճը կհարվածի ԱՄՆ-ի ու Չինաստանի տնտեսությանը՝ երկրներ, որոնց գերակայությունն աշխարհում Մոսկվայի մոտ անգամ սարսափ է առաջացնում, իսկ Եվրոպան կարող է ել ավելի կախված լինել ռուսական էներգակիրների մատակարարումներից:

Վերջնարդյունքում՝ խաղատախտակին դրված է անհամեմատ ավելի կարեւոր ռազմավարական խնդիր. պե՞տք է, արդյոք, Միացյալ Նահանգները Իրանը Մերձավոր Արեւելքում կայունացնող ուժի վերածելու երկարաժամկետ նպատակ դնի: Այն կարելի է առավել պարզ եւ սուր ձեւակերպել. պե՞տք է, արդյոք, ԱՄՆ-ը խրախուսի Իրանին, որ այն կրկին դաշնա իր կամ նույնիսկ Խսրայելի գործընկերը: Չէ՞ որ Իրանը երեք տասնամյակ իրոք եղել է Խսրայելի գործընկերը: Որքան ընդարձակ է օրակարգը՝ ընդգրկելով տարածաշրջանային անվտանգության, հնարավոր տնտեսական համագործակցության եւ այլ հարցեր, այնքան բարձր է ընդունելի փոխազդումներ գտնելու հավանականությունը: Կամ, միգուցե, Թեհրանին հարկավոր է Վերաբերվել այնպես, ինչպես երկրի, որն առանց այդ էլ խիստ անհանգիստ տարածաշրջանում այսուհետեւ էլ դատապարտված է մնալու որպես թշնամական եւ ապակայունացնող ուժ:

Առավել կոշտ մոտեցման կողմնակիցները պետք է հիշեն, որ Միացյալ Նահանգները զգալու է Իրանի վրա հարձակման ցավագին հետեւանքները, անկախ նրանից, թե ով է սկսելու ռազմական գործողությունը՝ ԱՄՆ-ը, թե Խսրայելը: Ամենայն հավանականությամբ, Թեհրանն իրեն թիրախս է ընտրելու Աֆղանստանի ու Իրաքի ամերիկյան գործերը, եւ նա ընդունակ է ապակայունացնել դրությունը երկու երկրներում: Յորմուգի նեղուցը կարող է վերածվել մարտական գործողությունների այրվող գոտու, եւ ամերիկացիներին կրկին հարկ է լինելու ավտոլիցքավորումների վրա խելահեղ գներ վճարել: Իրանը հենց այն խնդիրն է, որի դեպքում Օբաման պետք է կստահի իր առաջնորդական հմտություններին եւ թույլ չտա, որպեսզի իրեն կառավարեն: Մինչ այժմ դա նրան հաջողվել է:

### Աֆղանա-պակիստանյան ճահիճ

Երրորդ անհետաձգելի եւ նուրբ արտաքին քաղաքական խնդիրը փակութային իրավիճակն է Աֆղանստանում ու Պակիստանում: Օբաման իր մեջ ուժ է գտել իրաժարվելու առավել փառասիրական եւ անգամ գաղափարախոսական նպատակներից, որոնք Վաշինգտոնն իր առջեւ դրել եր աֆղանական կամպանիայի սկզբին (օրինակ՝ այնտեղ ժամանակակից ժողովրդավարության ստեղծումը): Սակայն Միացյալ Նահանգները պետք է աֆղանա-պակիստանյան կամպանիայի անցկացման ժամանակ, ուր նախկինի պես գերակշռություն է ռազմական տարրը, բարձր զգուշավորություն դրսեւորի: Յակառակ դեպքում՝ աֆղաններն ու պակիստանցիներն

այդ ներխուժումը կընկալեն իբրեւ արեւմտյան գաղութային քաղաքականության հերթական դրսեւորում եւ դրան ավելի ռազմաշունչ կերպով կիակաղաքարձեն:

Անհրաժեշտ է իրականացնել շտապ ռազմավարական վերագնահատում: Սակայն ոչ մի նոր ռազմավարություն հաջող չի լինի, եթե այնտեղ բացակայի երկու կարեւոր տարր:

**Առաջին.** աֆղանական կառավարությանը եւ ՆԱՏՕ-ին հարկավոր է ջանքեր գործադրել՝ համաձայնության հասնելու «Թալիբան» շարժման հետ: Թալիբները համաշխարհային հեղափոխական կամ ահաբեկչական շարժում չեն, եւ նրանք Արեւմուտքին անմիջական սպառնալիք չեն ներկայացնում, թեև հետեւում են աֆղան հասարակության կառուցվածքի մասին միջնադարյան գաղափարների: Ավելին, «Թալիբան» շարժումը մինչ այժմ Աֆղանստանում մնում է փոքրամասնություն, որը վերջնարդյունքում կարող է պարտության մատնվել միայն մյուս աֆղանների կողմից (թեև դաշնակիցների օգնությամբ): Ընդ որում, ավելի շուտ անհրաժեշտ է քաղաքական, քան ռազմավարական ռազմավարություն:

**Երկրորդ.** Միացյալ Նահանգները պետք է մտածի՝ ինչպես ապահովել Պակիստանի աջակցությունը: Դրա համար հարկավոր է ոչ միայն թալիբներին դուրս մղել Պակիստանից՝ չքողնելով նրանց այդ երկրում իրենց հարմարավետ զգալու հնարավորություն, այլև ճնշում գործադրել Աֆղանստանի թալիբների վրա, որպեսզի նրանց առաջնորդները գնան համաձայնագրի ստորագրման: Դաշվի առնելով, որ շատ պակիստանցիներ կարող են թալիբների հսկողության տակ գտնվող Աֆղանստանը գերադասել Պակիստանի գլխավոր թշնամուն՝ Դնդկաստանին հարող աշխարհիկ Աֆղանստանից, ԱՄՆ-ը պետք է հանգստացնի Իսլամաբադին, որպեսզի «Թալիբան» շարժման անհաջտ տարրերի դեմ պայքարում ստանա Պակիստանի ղեկավարության անվերապահ աջակցությունը: Այդ իմաստով, պետք կլինի Զինաստանի օգնությունը՝ հաշվի առնելով տարածաշրջանային կայունության ապահովման գործում նրա աշխարհաքաղաքական շահը եւ Իսլամաբադի հետ ավանդական սերտ կապերը:

Միացյալ Նահանգների գլոբալ դերը տեսանելի ապագայում կախված կլինի նրանից, թե Օքամային որբանով կիաջողվի գլուխ հանել այս երեք անհետաձգելի ու փոխկապակցված խնդիրներից: Եթե Մերձավոր Արեւելքի խաղաղության գործընթացը տապալվի, իրանի դեմ կսանձա-

գերծվի ռազմական կամպանիա, իսկ մարտական գործողությունների հաճախականությունն Աֆղանստանում ու Պակիստանում կսկսի աճել. Եւ այս ամենը տեղի կունենա միաժամանակ: Այս պարագայում ԱՄՆ-ը երկար տարիներ դատապարտված կլինի վիթխարի եւ անկանխատեսելի տարածաշրջանում միայնակ դիմակայել իր համար կործանարար հակամարտությանը, ինչը կարող է վերջ դնել ամերիկյան գերիշխանությանն աշխարհում:

(Իոլվածը գրվել է մինչ Օբամային Օսլոյում խաղաղության Նորելյան մրցանակի հանձնման արարողությունը. – Խմբ.)

**«Россия в глобальной политике»**  
**թիվ 1, 2010**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆ

<b>ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ</b>	<b>1</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈԽ</b>	<b>3</b>
<b>Ոուբեն Մելքոնյան ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՇՈՒՐԶ</b>	<b>8</b>
<b>Վահրամ Հովյան ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ</b>	<b>13</b>
<b>Արաքս Փաշայան ԱՂՋԲԵԶԱՆԻ ՀԱԿԱՐԱՅ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ</b>	<b>20</b>
<b>Սեւակ Սարուխանյան ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱՆԻ ՇՈՒՐԶ</b>	<b>24</b>
<b>Կարեն Վերանյան ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅՐՑԸ ԻՍՐԱՅԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ</b>	<b>30</b>
<b>ԲԵՆԻԱՄԻՆ Պողոսյան ՆԱՏՕ-Ի ՆՈՐ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՈՒՐԶ</b>	<b>34</b>
<b>Զբիգնել Բժեզինսկի ԱՆԴԵՏԱԶԳԵԼԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ</b>	<b>40</b>

*Շապիկին պատկերված* [է](#)  
**Սաղամոն Ահճը (Զավախը)**

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երևան, 375010, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթ՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ O1U 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: